ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐ

Գ

ՍՈՒՐԲ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

ՀՐԱՄԱՆԱՒ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐ

Գ

ՍՈՒՐԲ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԵՐ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2007

ՀՏԴ 25
ԳՄԴ 86.37
Ս – 970

Թարգմ. գրաբարից՝
Գ. Գասպարյանի

Ս. ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ
Ս – 970 ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԵՐ: - Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007. - 76 էջ:

ԳՄԴ 86.37

Տպագրվում է մեկենասությամբ՝

ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՍԱՐՈ, ՐԱՖՖԻ ՄԱՐՈՒՔՅԱՆՆԵՐԻ

ISBN 978-99930-75-43-1 © Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007 թ.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մովսես Խորենացին մեծարվել է Քերթողահայր շքանունով: Անշուշտ, այդ պատկերացումը հիմնված է «Պատմութիւն Հայոց» դարակազմիկ աշխատության վրա: Բայց այդ մեծ գիրքը միայնակ ծառ չէր՝ բուսած անապատում: Կային նաև այլ տնկիներ, որ աճեցրել էր նա, կային բազմաթիվ երկասիրություններ, որոնք, այնուամենայնիվ ինչ-որ գույն ու գիծ են ավելացնում նրա ժառանգությանը: Նա հեղինակ է Սուրբ Տրդատին և Գրիգոր Լուսավորչին նվիրված տաղերի, բազմաթիվ շարականների: Ստեփանոս Չիք Ջուղայեցին «Յաղագս Շարականաց, թէ յումմէ են երգեալ» ոտանավորում մասնավորաբար գրում է.

«...Իսկ զՅայտնութեան և զՅարութեան,
Սուրբ Գալըստեան քառասնօրին,
Մեծացուսցէք ընդ Փոխման Կուսին՝
Մովսէս Քերթող Խորենացին»:
(*Հ. Անասյան*, Հայկական մատենագիտություն, հատ. Ա, Երևան, 1959, էջ LXX):

Հնարավոր է, որ Խորենացուն ավանդաբար վերագրվող ոչ բոլոր երկերն են իրենը: Բայց որ Մովսես Խորենացին իր կյանքն անցկացրել է մատենագրական ամենատարբեր զբաղումներով, վկայում է հենց ինքը՝ Պատմության մեջ: Չնայած առաջացած տարիքին՝ նա մշտապես ունեցել է այլազան գրական աշխատանքներ, բայց երբ Սահակ Բագրատունի իշխանը առաջարկում է գրել «Պատմութիւն Հայոցը», նա ստանձնում է այդ պարտականությունը, որովհետև իր ճաշակին ու սովորություններ-

րին ևս ախորժելի էր: Բայց և այլ առիթով ասես խոստովանում է. «Մի մարդ եմ ծերացած և հիվանդոտ և թարգմանություններից անպարապ» («Պատմութիւն Հայոց», Գ, կե): Մովսես Խորենացին թարգմանել է Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, փոխադրել է Պիտոյից Գիրքը: Հիշենք, որ *թարգմանել* բառը անհամեմատ լայն հասկացություն էր և բացի հանրածանոթ իմաստից նշանակել է՝ պարզաբանել, մեկնել, բացատրել, սովորեցնել: Այս գրքույկում ամփոփված մանր երկերը գլխավորապես այդ ոլորտներին են վերաբերում և անծանոթ են ընթերցողների լայն հասարակությանը: Եվ՝ հանիրավի, քանի որ հարյուրամյակների խորքից մեզ ավանդում են հետաքրքրական մանրամասնություններ, ասենք, հայոց հին հավատքի, Վարդավառի տոնի, Հռիփսիմյան կույսերի ոդիսականի մասին և այլն: Վերջիններիս վերաբերյալ նյութեր Խորենացին քաղել է օտար աղբյուրներից, հունարենից, և պատմում է իրողություններ, որ չենք հանդիպում Ագաթանգեղոսի Պատմության մեջ, և, ընդհակառակն, ինչ որ ունի Ագաթանգեղոսը, չի վերապատմում, այլ հղում է նրան: Ի շարս այլ նյութերի՝ հեղինակը հավելյալ տեղեկություններ է հայտնում մեզ նաև իր մասին: Ինչպես Պատմության մեջ, այստեղ ևս շեշտում է իր ծերության հանգամանքը. «Մեղքերով հնացած ծեր մարդուն նմանեցնում եք հրեշտակներին»: Խորենացուն նմանեցրել են և մարգարեներին: Աստվածածնի փորագիր դիմանկարի ստեղծման և Հայաստան բերվելու պատմության վերնագրում կարդում ենք. «[Արծրունի] Սահակի թղթի պատասխանը, որի մեջ կան *մարգարեական խոսքեր*...»: Խորագիրն ամբողջությամբ չէր կարող հեղինակային լինել: Մասնավորաբար ընդգծված բառակապակցությունը ձեռագիրն ընդօրինակող գրիչներինն է և դարձյալ ցույց է

տալիս միջնադարի մտավոր գործիչների գնահատանքը Քերթողահոր վաստակի նկատմամբ: Այդ բանը հաստատող բազմաթիվ փաստերից հիշենք լոկ հետևյալը, որ համահունչ է վերևում բերվածին.

«Մովսէս Քերթող Խորենացի,
Սուրբ և ընտրեալ և հրաշալի...
Համանման մարգարէի,
Ծածկեալ անտեսն առնէ յայտնի...»

(*Գրիգոր Տղա*, Բանաստեղծություններ և պոեմներ, աշխատասիրությամբ Աս. Մնացականյանի, 1972, Երևան, էջ 207):

«Սահակի թղթի պատասխանը...» և «Սուրբ Հռիփսիմյանների պատմությունը» գողտրիկ պատմական բնագրեր են, որ կհետաքրքրեն ընթերցողին, մյուս երկուսը («Վարդավառի խորհրդի մասին», «Սուրբ Հռիփսիմեի և նրա վկայակիցների հիշատակին») ներբողներ են, որ համեմատելի են հին մատենագրության այդ տեսակի լավագույն նմուշներին:

Ա. ՍԱՂՈՅԱՆ

ՍԱՀԱԿ ԱՐԾՐՈՒՆՑԱՑ ԻՇԽԱՆԻ ԹՈՒՂԹԸ ԵՐԱՆԵԼԻ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒՆ

Քրիստոսի մեծություններին հրեշտակ և սպասավոր, երկրի վրա երկնայինը ցուցանող երկրակենցաղ այր և խավարյալներիս լուսավորիչ, մեր վերջին ժամանակներում եղած աննվազ լույս, ինչպես որ Տերն ասաց աշակերտներին. «Դուք եք աշխարհի լույսը» [Մատթ., Ե 14]: Եվ միառ-ժամանակ կամենում ենք ցնծալ քո լույսի մեջ, որ եղար մեզ համար երկրորդ Սահակ և Մեսրոպ՝ նրանց առ Աստված գնալուց հետո:

Որի համար թող երկրպագություն հասնի սուրբիդ. Բագրատունյաց իշխանի համար քո կողմից գրված գիրքը կարդացինք և ուսանեցինք Հայոց հայկական տոհմերի ուսմունքը և մեր նախնյաց գալն այս երկիր: Եվ հույժ ուրախացանք շնորհակալությամբ, որի համար երկնային երախտիքների Հատուցողը թող հատուցի մաքրափայլ անձիդ, և մենք՝ քո երկրավոր որդիները, տալիս ենք քեզ այն, ինչ հաճո է քո սրբությանը: Միայն փութա՛ տեսնել մեզ. աշխատի՛ր և հանգստացի՛ր քո որդյակների մոտ, որ օրհնվենք քո կողմից:

Կամենում ենք նաև ուսանել քեզանից Տիրամոր անունով պատկերի սքանչելագործությունը, որ գտնվում է Հոգյաց վանքում, թե որտեղից կամ ում կողմից բերվեց այնտեղ. որովհետև շատ բաներ ուրիշներն այլ կերպ են պատմում՝ իրար ոչ նման, և չհավատացինք որևէ մեկին, թե ստույգ գիտի:

Իսկ թե ունենամ ձեռքիդ սուրբ մատների գիրը, առավել հուսով կընդունեմ, քան Բագրատունյաց գիրքը, որ ձեռքիս է: Ո՛ղջ եղիր ի Տեր, աղոթի՛ր մեզ համար և շտապի՛ր գալ, աղաչում եմ:

ՍԱՀԱԿԻ ԹՂԹԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ, ՈՐԻ ՄԵՋ [ԳՐՎԱԾ] ԵՆ ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԽՈՍՔԵՐ, ՆԱԵՎ՝ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՂԱՎ, ԿԱՄ ՊԱՏԿԵՐԻ ԱՆԱՐԱՏ ԿԵՐՊԱՐԱՆՔՆ ԻՆՉՊԵՍ ՇՆՈՐՀՎԵՑ ՓԱՅՏԻ ՎՐԱ ԵՎ ԹԵ՝ ՈՒՄ ՁԵՌՔՈՎ, ԵՎ ԻՆՉԸ ԵՂԱՎ ԽՆԴՐԻ ՊԱՏՃԱՌԸ, ԿԱՄ ԷԼ ՈՒՄ ԿՈՂՄԻՑ ԲԵՐՎԵՑ ՀԱՅՔ

Աստվածային հոգու շնորհների առատ հորդությունը, որ քո անդուլ մտքի վրա է՝ շնորհիվ Սուրբ Գրքի ծանոթության և առ Աստված սիրո, մինչև տեսնելը, համբավի միջոցով լսելով հզոր մեծիդ խոհականության մասին, ճանաչեցի. իսկ այժմ, այս արժանափայլ խնդրի միջոցով, նախքան պատկերիդ նկարագիրը և մարմնիդ տեսքը տեսնելը, հոգուդ վրեժխնդրության միջոցով իմացա, որ դա վերին շնորհներից է: Որի համար էլ և Ինքը՝ Բանն Աստված, մարդուն ստեղծելիս խոսքով զարդարեց՝ օրհնելու և ճանաչելու Երախտագործին, ինչի մասին [Սաղմոսերգուն] ասում է. «Օրհնի՛ր, ա՛նձ իմ, Տիրոջը, և մի՛ մոռանա Նրա գործերը» [Սաղմ., ՃԲ 2]: Սրանով Տերն ուրախանում է և երանի տալիս նրան, ով Տիրոջ օրենքի մեջ կխորհի օր ու գիշեր, քանզի նա որպես անթառամ ծառ կլինի ջրերի հոսքում, որն իր պտուղը ժամանակին կտա [տե՛ս Սաղմ., Ա 3]: Քանի որ թեպետ և հողն իրենը սիրում է, սակայն գովելի չէ, քանզի եղծանելի է. քանի որ Աստված մարդուն անմահության մեջ ստեղծեց, ինչպես ասաց, բայց [նա], ստեղծականով կերակրվելով, մահացավ: Ուստի, խոսքի կայծակը վառ և բորբոք պահելով, անմահա-

նում եմ: Շատ շատերից երկու քույրերի վարքի մասին միայն կասեմ քեզ, որովհետև երկուսն էլ ջերմությամբ ընդունեցին Տիրոջը: Մարթան՝ կերակրելով, բայց Մարիամն է գովելի, որովհետև աստվածեղեն բերանով ասվեց. «Այստեղ քիչ բան է պետք. Մարիամը բարի մասն ընտրեց, որ չի վերցվի նրանից» [Ղուկ., Ժ 42]:

Այս ամենից իմացա, թե ով ես, մեծ իշխա՛նդ Վասպուրականի, որ թեպետ և նախարարների թվում ես, սակայն թագավորական տնից ես և ազգով՝ քաջ ու հին, և արդասավոր սերունդ ու զարմ ես. ոչ միայն խոսքով ես ճոխացած, այլ նաև պատերազմական գործի մեջ ես առաջիններին թվում: Քանզի ինչպես երկու մարդու լինելությամբ այս երկիրը հաստատվեց, այնպես էլ երկու տներիդ՝ Արծրունիների և Բագրատունիների միջոցով են մեր այս աշխարհի սերունդներն ապրում: Եվ ինչպես երկու աչքերն են ողջ մարմինը զարդարում, այնպես էլ երկու կողմերդ՝ արևելյան և հյուսիսային, լուսավորում եք [մեր երկիրը]. և ինչպես երկու ձեռք միանալով են գործին պիտանի դառնում, այնպես էլ մեր Հայոց երկիրը ձեզանից է գոյանում: Եվ ինչպես ողջ մարմինը երկու ոտքի վրա է հաստատվում, այնպես էլ երկու տների միջոցով Հայոց բոլոր ազգերը հնազանդվելով լինում են որպես մի կատարյալ մարդ ի Քրիստոս: Եվ դուք՝ երկու ցեղերդ, միմյանց միացած, անսասան եք:

Քե՛զ եմ դիմում, Արծրունյա՛ց իշխան, Տերն ինձ ցույց տվեց, որ քո զավակներից երեք եղբայրներ Քրիստոսի համար մահվան են մատնված, երկուսը Քրիստոսի վկաներն են արյամբ, իսկ մեկը վրիպել է նրանցից, և այս վայել չէ: Նրանց համար Աստված Սենեքերիմ թագավորի թագը, քո որդիներին վերադարձնելով, երկարաձգում է երկրի վրա: Եվ Բագրատունո՛ւդ եմ դիմում. Տերն հիշում է իր խոսքը, թե քեզանից թագավորներ կծնվեն, և թագավորում եք Դվինում. և այլ ոչինչ չունեմ ձեզ ասելու, մինչև Տերը տեսնել կտա:

Իսկ գովասանական խոսքերիդ համար շնորհակալ եմ. և չեմ երկրպագում, քանզի մեղքերով հնացած ծեր մարդուն նմանեցնում եք հրեշտակների. երանի՜ թե նրանց աշակերտն արժանի լինեի կոչվել, էլ չեմ ասում՝ փոխանորդ: Քանզի, նրանց վարքը հանապազ հիշելով, մաշվում եմ՝ ինձ անարժան համարելով, բայց քանի որ արժանի համարեցիք ինձ հիշել Հատուցողի մոտ, երկրպագեցի, և Աստված ձեզ օրհնություն առատապես թող հատուցի: Այլևս չեմ ուզում ձեզ վրա ծանրանալ երկրի վրա, աստվածասե՛ր իշխաններ. հոգով և մտքով միացե՛ք ինձ ի Քրիստոս. քանզի ձեզանից ոչ թե որևէ բան, այլ ձե՛զ եմ խնդրում:

Իսկ աստվածասեր իշխանիդ խնդիրը՝ Տիրամոր պատվական պատկերի մասին, քո անմահ ազգին եմ հիշատակ թողնում. քանզի զվարթանում եմ Տիրամորը հիշելիս, որը ծագեցրեց արդարության Արեգակին երկրի վրա՝ դառնալով արդարության Արեգակի ճշմարիտ արևելքը. քանզի նրանից է փրկությունը, նրանից է կենդանությունը, նրանից է և Քրիստոսն ըստ մարմնի, որ օրհնյալ Աստված է հավիտյանս. ամեն:

Իսկ ինչ պատվիրել էիք ինձ՝ ձեր դռան քահանային, Բեթղեհեմի շինության մասին, թե ով կամ ում կողմից [եղավ], և ինչու Ղուկասը Նաթանին, իսկ Մատթեոսը Սաղոմոնին են հիշատակում որպես կույսի նախնիներ, և ինչու ոմանք ցերեկվան, ոմանք էլ գիշերվան են առաջնություն տալիս, գրում եմ ձեզ, բայց այժմ տեսության չեմ գալիս հզոր իշխանիդ, մինչև որ կատարվի Իսկուհու տոնը. այժմ աստվածասեր անձիդ գրում եմ տեղի պատճառների մասին:

Բեթղեհեմ թարգմանվում է հացատուն, ինչպես որ ասվեց Տիրոջ կողմից՝ «Ես եմ կյանքի հացը» [Հովհ., Զ 35]. և այս տեղը հեթանոսներինն էր և նահապետի կողմից գնվեց, որ հեթանոսների համար դեպի կենդանություն ճանապարհ լինի, որովհետև հեթանոսներինն էր այն երկիրը, ուր ծնվեց Քրիստոս: Բեթղեհեմը նահապետների տունն էր. որովհետև Փարեսը ծնվեց Հուդայից և Թամարից, Փարեսը ծնեց Եզրոնին, Եզրոնը՝ Արամին, Արամը՝ Ամինադաբին, որը Հուդայի զորքի սպարապետն էր Մովսեսի՝ Իսրայելի որդիներին Եգիպտոսից հանելու ժամանակ: Սա ծնում է Նաասոնին, որն անապատում Հուդայի բյուրավորների իշխանն էր, իսկ Ամինադաբի դուստրը Եղիազարի կինը եղավ՝ Ահարոն քահանայապետի որդու, որից ծնվեց Փենեհեսը: Ամինադաբից քահանայության և թագավորության օրհնությունը բխեց. թագավորությունը՝ Նաասոնից, և քահանայությունը՝ Նաասոնի քրոջ ծնունդից, որ ծնեց Փենեհեսին, ով, նախանձախնդիր լինելով, մեղմեց Աստուծո բարկությունը. և Նաասոնը ծնում է Սաղմոնին: Այս Սաղմոնը Հուդայի ցեղի իշխանն էր, երբ Հեսուն Իսրայելի որդիներին՝ տասներկու ցեղերի բանակներին, անցկացրեց Հորդանանով: Եվ երբ Հեսուն կործանեց Երիքովը, Ռախաբ պոռնիկին փրկելով կնության տվեց Սաղմոնին. և սա իր համար Բեթղեհեմ քաղաքն էր կառուցում Հուդայի հողում. և նրանից [այսինքն՝ Ռախաբից] ծնեց Բոոսին: Եվ Բոոսը կին առավ մովաբացի Հռութին և նրանից ծնեց Ովբեդին, և Ովբեդը ծնում է Հեսսեին, Հեսսեն ծնում է Դավթին: Սա մարգարեի հոգեխառն խոստովանությունն է. «Բնավ կրտսեր չես Հուդայի իշխանների մեջ» [տե՛ս Միք., Ե 2]: Իսկ Եփրաթան թարգմանվում է բացումն, քանզի այստեղ Սամուելը յուղով օծեց Դավթին, որը նախաճառել էր մարգարեն. «Քեզանից իշխան կելնի

Ինձ համար, որ կհովվի Իմ Իսրայելի ժողովրդին» [տե՛ս նույնը]:

Կատարվեց մեծ նահապետի օրհնությունը, [որն] ասաց, թե իշխանն անպակաս է լինելու Հուդայից, մինչև Նրա գալը, Ումն է թագավորությունը, և Նա՛ է հեթանոսների ակնկալությունը: Ոչ թե Դավթի՛ մասին ճառելով՝ այս մարգարեացավ, այլ՝ [Նրա], Ով Դավթի գավակից ճշմարտապես մարմնավորվեց: Ծնվեց սուրբ Կույսից Բեթղեհեմում, որ Դավթի քաղաք կոչվեց: Այստեղ էր բացում տիեզերքի տեսության դուռն Արարիչ Բանի ճշմարիտ մարմնավորման համար, որ Հուդայի գավազանի առաջին և ոչ թե կրտսեր քաղաքն է: «Քեզանից իշխան կելնի Ինձ համար». [սա] ոչ թե Դավթի կամ մաքուր թագավորների մասին է ասված, որոնք միայն Իսրայելի վրա տիրեցին, այլ Բեթղեհեմում Կույսից Ծնվելիքի, [Որն] աստվածաբար տիրեց նաև տիեզերքին: Եվ՝ որպեսզի հրեաները չպարծենան՝ միայն իրենց մարմնավորությանը հավատալով, քանզի հեթանոս անմաքուր կանայք՝ Թամարը, Ռախաբը, Հռութը, նույնպես ժառանգեցին Իսրայելի դուստրերի մաքրությունը. որպեսզի հեթանոսների ժողովարանն էլ պարծենա՝ սուրբ Կույսի՝ այսպիսի նախնիներ ունենալով: Որպեսզի՝ ինչպես հրեաներն են պարծենում թագավորներով ու նահապետներով, այնպես էլ սուրբ Եկեղեցին խնդա տեղով, Թամարով, Ռախաբով, Հռութով: Եվ նրանց, իբրև մեծ և առաքինի կանանց, տեսանելի փրկությունն ինչպես որ թագավորներով և նահապետներով հաստատեց, այնպես էլ՝ Բեթղեհեմի՝ հասարակաբար աստվածընկալ այրով, հավաստապես՝ աստղով, անջատ-անջատ՝ մոգերով, և անբաժանելի մարմնացած Բանով:

Երկկողմ մասերից՝ հեթանոս անառաքինի կանանցից [և] Իսրայելի թագավորներից ու նահապետներից ծնված

սուրբ Կույսից անմուտ Արեգակը փայլեց և ջահավորեց ողջ տիեզերքը:

Արդ, ոչ ոք թող մեզ անուսում չհամարի, որ կրկնաբանում ենք մեր իսկ կողմից ասվածը, այլ աստվածասեր անձիդ համար եմ գրում այս բոլորը սույն գրվածքի մեջ: Այն պատճառով Բոոսը կին առավ մովաբացի Հռութին, որպեսզի նրանով հաղորդակից լինի արդարների օրհնությանը: Եվ Հռութից սերվեց Դավթի տան ազգը, և նրա զավակից ծնվեց Քրիստոս Արքան: Կահաթը ծնեց Ամրամին, և Կահաթի կնոջ անունը Ովրաբ էր՝ Ղևիի դուստրը, որ ծնեց Սաղային Եգիպտոսում, և Սաղան Ամրամից ծնեց Ահարոնին, Մովսեսին և նրանց քույր Մարիամին: Մովսեսն ութսուն տարեկան էր, և նրա Ահարոն եղբայրը՝ ութսուն և երեք, երբ խոսեցին Փարավոնի հետ: «Եվ Ահարոնն իր որդու համար,– ասում է,– կին առավ Ամինադաբի դուստր, Նաասոնի քույր Եղիսաբեթին՝ Հուդայի ազգից», որտեղից էլ քահանայության և թագավորության ցեղերը խնամությամբ իրար խառնվեցին: Ուստի թեպետ և Հիսուսի մայր Մարիամը Հուդայի ազգից էր, սակայն, քահանաների և թագավորների՝ խնամությամբ իրար խառնվելու պատճառով ազգակից է Զաքարիայի կնոջը՝ Եղիսաբեթին: Որովհետև Նա, Ով նրանից ծնվելու էր, և՛ քահանա էր, և՛ թագավոր:

Իսկ Ղուկաս ավետարանիչը ոչ թե ըստ բնության է ազգահամարը դասակարգում, այլ՝ ըստ օրենքի: Քանզի երբ եղբայրն անզավակ մահանում էր, մյուս եղբայրն էր առնում [նրա] կնոջը և զավակ ունենում եղբոր անունով: Եվ ըստ բնության Միավորվածը, երանքից ծնվող Քրիստոսն այն ժամանակվանից ի վեր այլևս չէր բաժանվում. ուստի [Ղուկասը] թվարկում է մինչև Ադամ և Աստված: Իսկ Մատթեոս ավետարանիչը թվարկում է Աբրահամից

մինչև Քրիստոս, որովհետև Քրիստոսը նրա զավակներից էր ծնվելու և նրանց երանքից էր սերվում: Մատթեոսը Սաղմոնին է հիշատակում, իսկ Ղուկասը՝ Նաթանին, որովհետև ազգը Նաթանից էր սերվում մինչև Հովսեփ և Սաղմոնից՝ մինչև Մարիամ՝ ըստ հրեշտակապետի խոսքի. «Հովսե՛փ, Դավթի՛ որդի, մի՛ երկնչիր քեզ մոտ վերցնել Մարիամին» [Մատթ., Ա 20]: Եպիփան Կիպրացի մեծ վարդապետն էլ այսպես է ասում. «Սուրբ Կույս Մարիամ Աստվածածինը Հովակիմի և Աննայի դուստրն էր», իսկ Հովակիմը՝ որդին Բարիի, որ Պանթեռ է կոչվում և Մեղքիի եղբայրն է, ինչպես որ հրեաների ավանդությունն է պատմում: [Սա] Ղևիի որդին էր՝ Նաթանի զավակից և Սաղմոնի [սերնդից], Դավթի ցեղից, Հուդայի ազգից: Իսկ Ղևիի որդի Մեղքին, Մատթանի՝ Հակոբի հոր վախճանվելուց հետո առավ Մատթանի կնոջը՝ Հակոբի մորը, որն այրի էր. Հակոբը գնաց իր մոր հետ Մեղքիի մոտ և մեծացավ նրա տանը. [Մեղքին] եղբայրն էր Հովակիմի հոր՝ Բարիի, որ Պանթեռ է կոչվում: Իսկ Մատթանի կնոջից երկու եղբայրներ ծնվեցին, Մատթանից՝ Հակոբը, և Մեղքիից՝ Հեղին: Եվ Հակոբն ու Հեղին եղբայրներ էին՝ համամայր տարբեր հայրերից: Իսկ երբ Հեղին վախճանվեց՝ անզավակ մնալով, Հակոբն, ըստ օրենքի, իր եղբոր կնոջն է առնում, որպեսզի նրա համար զավակ ունենա: Եվ այսպես Հակոբը Հեղիի կնոջից ունեցավ Հովսեփին և Կղեովպասին, որոնք ըստ բնության Հակոբի ծնունդներն էին, իսկ ըստ օրենքի՝ Հեղիի որդիները: Իսկ Հովակիմը՝ Մարիամի հայրը, և նրա հայր Պանթեռը՝ Մեղքիի եղբայրը, Ղևիի որդիներն էին, Հակոբի ազգակիցները, ինչպես որ ցույց են տալիս եբրայեցիների ավանդությունները: Այսպիսով, Մարիամը դուստրն է Հովակիմի, թոռը Պանթեռի՝ Մեղքիի եղբոր, Ղևիի որդու, որն առավ Մատթանի կնոջը: Իսկ Հեղիի կի-

նը, որ տրվեց Հակոբին, ծնեց Հովսեփին, ինչպես նախապես ասացինք: Այսպիսով, Մարիամը, որի այրը Հովսեփը եղավ, երկու նահապետություններից էր [սերվում]՝ Նաթանի և Սաղմոնի, հոր կողմից Դավթի ազգից էր, իսկ մոր կողմից՝ Հեղիի՝ իր հայր Հովակիմի ազգակցի, և ըստ քահանայության՝ Եղիսաբեթին ազգակից:

Եվ ինքը՝ սուրբ Կույսը, սքանչելի վարքով, սրբությամբ գերազանցեց բոլորին՝ ըստ Սողոմոնի խոսքի. «Բազում դուստրեր մեծություն ստացան, բայց դու առավել եղար» [Առակ., ԼԱ 29], ինչպես Գաբրիելն ավետարանեց Նազարեթում: Նրա կյանքի տարիների ընդհանուր գումարը վաթսուն տարի է: Տասնհինգ տարեկանում ծնեց աշխարհի Փրկչին, [ապրեց] ևս երեսուներեք տարի մինչև Փրկչի խաչելությունը, իսկ Փրկչի երկինք համբարձվելուց հետո՝ տասներկու տարի, որը նրա կյանքի սկզբից մինչև հրաշալի վերափոխումը վաթսուն տարի է [անում]:

Սուրբ Կույսը, Եղիսաբեթը և Սողոմեն երեք քրոջ երեք դուստրեր էին. և Կղեովպասի կին Մարիամն [տե՛ս Հովհ., ԺԹ 25] Աստվածածնին քույրն է համարվում, որի մասին [Ավետարանում] ասվում է՝ Հիսուսի խաչի մոտ էր: Նաև Մարիամի այր Հովսեփը չորս որդի ուներ՝ Հակոբոսը, Սիմոնը, Հուդան և Հովսեսը. ուներ նաև երեք դուստր՝ Մարթան, Եսթերը, Սողոմեն, որը Հակոբի և Հովհաննեսի մայրն էր և Զեբեդեոսի կինը: Եվ Հովհաննեսը Փրկչի քրոջ որդի է անվանվում, քանզի ինչպես որ Հովսեփի որդիները Փրկչի եղբայրներ են ասվում, այնպես և դուստրերը՝ քույրեր: Հովսեփը քառասնամյա էր, երբ Կույսը հանձնվեց նրան, և Կենարարի երեսունմեկ տարեկանում վախճանվեց Նազարեթում, իր տանը: Եվ սուրբ Կույսին սպասավորում էր Հակոբ արդարը, որին Հովսեփն էր պատվիրել, որովհետև Հովսեփի կենդանության ժամանակ էլ էր նա ծառայ-

պես հոգ տանում, [այդ] հեզ և արդար [մարդը], մինչև որ Քրիստոսը [սպասավորությունը] հանձնեց Հովհաննեսին:

Եվ սուրբ Կույսը բազում չարչարանքներ և վտանգներ կրեց Կայիափայից և հալածանքներ՝ հրեաների կողմից: Քանզի չէին թողնում, որ նա գերեզման գնա աղոթելու կամ հայտնապես՝ Գեթսեմանի [պարտեզ] կամ Փրկչի այլ տնօրինական վայրերը, այլ միայն գաղտնի [էր գնում]: Եվ, հալածելով տյառնեղբայր Հակոբին, գնացին կրակի մատնեցին այն տունը, որտեղ գտնվում էր Սրբուհին, և հուրը, հրեաներին չրջապատելով, յոթ մարդ այրեց և Կայիափա, Աննա և Ղևի քահանայապետերին՝ տանը ոչ մի վնաս չտալով: Եվ երկյուղելով՝ այլևս չէին հանդգնում սուրբ անձին [վնասել]: Տիրոջ Մկրտության օրը հրեաների խաժամուժ ամբոխված հրոսակները Հորդանան էին գնացել՝ բռնելու Տիրամորն ու Հովհաննեսին: Բայց Աստուծո հրեշտակը նրանց գետի մյուս ափը տեղափոխեց, և երբ հրեաները կամեցան անցնել, Հորդանանը նրանցից քսան մարդու ջրասույզ արեց: Եվ Տիրոջ Համբարձման օրը հրեաները Ձիթենյաց լեռան վրա, քարերով հախուռն հարձակվելով Սրբուհու վրա, իրենցից հիսուն այրի քարկոծելով սպանեցին: Բայց քանի որ Տիրամոր բազում հալածանքների մասին գրելով՝ ճառս կարդալու համար ձանձրալի կդառնա, այսուհետ կդառնամ սուրբ պատկերի խնդրին:

Երբ Սրբուհին հրավիրվեց փոխվելու իր Որդու մոտ, ավետարանիչը, գտնելով կիպարիսից տախտակ, որից կենսաբեր խաչն էր, մեծ թախանձանքով կերպաձևում է Տիրամոր պատկերը, որպեսզի նշխար մնա մեր կյանքի համար. ավետարանչի անձկալից սրտին հույժ բաղձալի էր դա: Քանզի մեր Փրկչի համբարձվելուց հետո նրանով էին աշակերտները մխիթարվում՝ Սուրբ Կույսին տեսնելով որպես նրա Որդուն. նաև Պետրոսն ու Պողոսը բազում ան-

գամ Երուսաղեմ էին գնում՝ սուրբ վայրերը տեսնելու և Իսկուհուն տեսակցելու:

Արդ, երբ աշակերտները համագումար միաբանությամբ ժողովվեցին՝ իրենց Աստվածամորը [Տիրոջ մոտ] ճանապարհելու համար, ըստ Տիրոջ խոսքի, թե՝ «Ուր մարմինն է, այնտեղ արծիվները կժողովվեն» [Ղուկ., ԺԷ 37], որոնք թեպետ և խաչելության ժամին ցրվեցին, բայց հարության ժամին համախմբվեցին. քանզի Տերն ասել էր. «Քանդեցե՛ք այս տաճարը, և ես երեք օրում կշինեմ այն» [Հովհ., Բ 19]: Այս մասին մարգարեն ասում է. «Տերը շինում է Երուսաղեմը և Իսրայելի ցրվածներին ժողովում» [Սաղմ., ՃԽԶ 2]: Այնուհետև Հովհաննեսը մյուս առաքյալների հետ որոշեց աղաչել իրենց Տիրամորը, որ փայտեղեն անոթն իր աստվածատիպ պատկերի վրա դնի, այն օրհնի և Տիրոջից խնդրի երկրին բարիք գործել իր փոխման ժամանակ, քանզի բորոտության ախտը մեծ ցասմամբ եռում էր երկրի վրա, իսկ Երուսաղեմում՝ առավել ևս: Երբ Պողոսը և Հովհաննեսը միաբան գնդով գնում են աղաչելու Տիրամորը, Պողոսն ամենաօրհնյալ սուրբ Կույսին ասում է. «Աստուծո Բանի անարա՛տ առագաստ, աղաչում ենք քեզ, վերցրո՛ւ Հովհաննեսի նկարած այս փայտեղեն պատկերը քո սուրբ ձեռքերի մեջ, օրհնի՛ր այն և տո՛ւր սա որպես աշխարհի կյանքի նշան. և աղաչի՛ր քո Որդուն և մեր Աստծուն պատկերի միջոցով վերացնել բորոտությունը մարդկանց որդիներից, որոնք քո բարեխոսությանն են ապավինում»:

Ամենաօրհնյալ սուրբ Կույսը պատասխանում և ասում է նրանց. «Եվ ինչո՞ւ եք ինձ՝ Տիրոջ աղախնին ստիպում իմ անունով անել այն, ինչ արժան չէ ինձ: Դուք եք եղել մեր Արարիչ Քրիստոսի աշակերտները, ձեզ է շնորհել դևերին հալածելու, ախտերն ու հիվանդությունները բժշկելու,

աներևույթ գազանին ընդոտնելու և աշխարհից կռապաշտությունը վերացնելու իշխանությունը: Ինչ որ դուք կամենում եք՝ խնդրե՛ք ձեր Տիրոջն ու Աստծուն և կունենաք. քանզի եթե երկինք փակելու իշխանությունն եք ստանձնել երկրի վրա և իշխաններ կարգվել տիեզերքի ոլորտներում, ձեզ Տերն Իր բարեկամներն է կոչել, և հրաշալի նշանները ձեզ համար են լինում, [ապա] ուր էլ որ ձեր ոտքերը հասնեն, ոչինչ ձեզ համար անհնար չի լինի: Այլ ինձ ձեր աղոթքներով [Տիրոջ մո՛տ] ճանապարհեք և, սիրով ու խաղաղությամբ միաբանվելով ինձ հետ, անխռով նավահանգի՛ստը հասցրեք»:

Պողոսն ասում է. «Սո՛ւրբ Կույս և Մա՛յր Աստուծո, մենք անպիտան ծառաներն ենք աշխարհի Արարչի, Որն հաճեցավ քեզանից մարմնանալ. քո Որդուց և մեր Աստծուց արժանացած ենք այս առաքելական շնորհին, որ ունենք. իսկ դու մեր Տիրամայրն ես, և մենք՝ աշխարհի հրովարտակները. դու Երրորդության հարսն ես, և մենք՝ փողեր, որ հնչեցնում են անճառ այն Ծնունդը, որ քեզանից էր. աղաչում ենք քեզ, մեզ համար նշա՛ն դարձրու այս պատկերը, ինչպես քո միածին Որդին, որ Իր մահվան փայտը որպես անմահության գործիք, կյանքի գանձ և դևերի հալածիչ տվեց աշխարհին: Իսկ այժմ շնո՛րհ արա, որ սա բժիշկ լինի վիրավորվածներին և նշխար՝ հավատացյալներին. որպեսզի երբ նրանք, ովքեր փափագում են տեսնել քեզ, այս տեսնեն, նրանց խնդրվածքներն իրագործվեն»:

Այնժամ ամենաօրհնյալ Սրբուհին, նկարված պատկերն իր սուրբ ձեռքերի մեջ վերցնելով, իր աստվածընկալ ձեռքերը տարածեց դեպի երկինք և ասաց. «Տե՛ր Աստված ամենակալ, Հա՛յր՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի, բարերար և բազումողորմ, որ աշխարհի կյանքի համար առաքեցիր Քո միածին Որդուն՝ մարմնանալու Քո անարժան աղախնուց,

որ Իր մարմնով կատարեց օրենքի և մարգարեների գրածները և դարձյալ համբարձվեց Քեզ մոտ, Քո հայրենի փառքի մեջ, այժմ աղաչում եմ Քեզ և խնդրում Քեզանից, վերացրո՛ւ, Տե՛ր, բորոտության ախտը մարդկանց միջից այս նկարված փայտեղեն պատկերի միջոցով՝ Երրորդության զորությունը սրա մեջ հաստատելով իմ այս աղաչանքի և խնդիրքի միջոցով. որ վերացրեցիր առաջին մարդու հանցանքը Քո միածին Որդու, մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի միջոցով, որ Իր մարմնով կատարեց առաքող Հորդ կամքը, և այժմ կատարի՛ր այս ընտրյալ այրերի խնդիրը, որ Քո խոսքով առաքվեցին ի փրկություն աշխարհի՝ ավետարանելու Սուրբ Երրորդությունդ, որպեսզի Քո երկրպագուները լինեն և փառաբանիչները Հոր և Որդու և Սուրբ Հոգուդ հավիտյանս. ամեն»:

Եվ երբ առաքյալներն ասացին «ամեն», նույն ժամին լուսեղեն կամար իջավ Սրբուհու վրա, և ամպեղեն լույս խաչանման կաթեց սուրբ պատկերի վրա: Եվ Սրբուհին պատկերն իր երեսին դրեց և այն թրջեց հորդառատ արտասուքներով, որ հեծում էր Տիրոջ առաջ: Եվ Պետրոս ու Պողոս առաքյալները Սրբուհու ձեռքից պատկերը վերցրին, և բոլորը երկրպագեցին:

Իսկ երբ անարատ Կույսն իր սուրբ հոգին Տիրոջ ձեռքն ավանդեց, հրեաների ամբոխի մեջ խռովություն մտավ. և երբ հարձակվեցին առաքյալների վրա՝ կամենալով հափշտակել Կույսի մարմինը, ամենքը կուրացան: Իսկ Սոփոնիա անունով մի մարդ բռնեց [մահճից], որն առաքյալները բարձրացրած տանում էին Գեթսեմանի կոչվող հանգստյան սուրբ վայրը, և Սոփոնիայի ձեռքերն, արմունկներից [պոկվելով], կախված մնացին մահճի կողքից. այրն, իրեն վայ տալով, մինչև գերեզման լալիս և աղաչում էր: Պետրոսն ասաց. «Ո՛վ մոլորյալ հրեաներ, մինչև ե՞րբ եք մոլորված մնալու և համառելու, ինչո՞ւ չեք զղջում ձեր անզեղջ սրտերում, մնում եք անհնազանդ, ինչպես ձեր հայրը՝ սատանան»: Եվ մեծ էր հրեաների լացուկոծը: Պողոսն ասաց. «Դեպի Տե՛ր դարձեք և խոստովանեցե՛ք սուրբ Կույս Աստվածածնին, և կգթա ձեզ»: Ողջ ամբոխն աղաղակեց և ասաց. «Խոստովանում ենք Հայր Աստուծո Որդի Քրիստոսին, Ով անճառապես մարմին առավ սուրբ Կույսից, Ում մենք անգիտությամբ խաչեցինք՝ Աստծուն հակառակ կարծելով. միայն թե գթա մեզ»: Եվ Պետրոսը, վերցնելով նրա ձեռքերի [մասերը], բերեց մոտեցրեց հատված ձեռքերին, և [դրանք] միանալով առաջվա պես կենդանացան: Եվ խավարյալները լուսավորվեցին, և հրեաներն ու հեթանոսները մեծ-մեծ խմբերով մկրտվեցին. և քաղաքում եղած բորոտները գալիս էին առաքյալների մոտ, յուղով օծվում, սուրբ պատկերով տյառնագրվում և իսկույն բժշկվում ախտերից. և, Տիրուհու ննջման լուրը [լսելով], բոլոր ախտաժետները գալիս անմիջապես առողջանում էին, մինչև որ լուրը լույսի ծագման պես տարածվեց ողջ Հրեաստանում:

Արդ, Բարդուղիմեոս առաքյալը՝ տասներկուսից մեկը, նրանց հետ չէր Կույսի [մոտ] համահավաքման ժամանակ, քանզի Տիրոջ կամքն էր, որ սա այսպես լիներ, քանի որ Թովմայի հետ Հնդկաստան էր գնացել: Եվ երբ հետո նա առաքյալների մոտ եկավ, ստիպեց նրանց, որ ցույց տան իրեն աստվածային գանձը՝ ամենաօրհնյալ Կույսի մարմինը: Եվ նրանք, իրենց եղբոր փափագը կատարել հոժարելով, այնուհետև բացեցին սուրբ գերեզմանը և այն դատարկ գտան աստվածակիր մարմնից: Եվ հիանալով իմացան, թե [ննջումից] երեք օր հետո, երբ հրեշտակների օրհնությունն ու սաղմոսերգություններն ավարտվեցին, սուրբ մարմինը փոխադրվել է նույն հրեղեն դասերի միջո-

ցով: Ապա Բարդուղիմեոսը հույժ վշտացավ, որ չհասցրեց տեսնել սուրբ Կույսին և չլսեց վերջին օրհնությունները, ինչպես մյուս առաքյալներն ու Տիրոջ աշակերտները, և ոչ էլ գերեզմանի մեջ գտավ. և նա ավելի ու ավելի էր տրտմում:

Երանելի առաքյալներն, այս տեսնելով և իրենց եղբորը մխիթարել կամենալով, տվեցին նրան փայտի վրա նկարված Տիրամոր պատկերը՝ հաստատված [Աստուծո] զորությամբ: Բարդուղիմեոսն, այն վերցնելով, ուրախացավ և կենդանի [հոգի] համարելով էր նայում: Ապա Սուրբ Հոգու հրամանով մեծ փութով Հայք ուղևորվեց, որովհետև Թադեոս առաքյալը սպանվել էր Սանատրուկ արքայի կողմից Հայոց Արտազ գավառում: Իսկ նա, Հայաստան գալիս, գնաց մոգերի և պարսիկների երկիրը և, հասնելով նրանց մայրաքաղաքը, որն այժմ նրանց լեզվով Խորասան է կոչվում, կրակարանի մեջ հրեղեն լույսի սյուն կանգնեցրեց և, սուրբ պատկերն արեգակի դեմ պահելով, կասեցրեց նրա ճառագայթները և վեց ժամ խավարեցրեց. և [ոչ ոք] չհավատաց, բացի այն ութ մոգերից, ովքեր երկրպագեցին Փրկչին և եկան մկրտվեցին առաքյալի կողմից, որը նրանց ամբարիշտների միջից հանեց և իր հետ Հայք բերեց: Եվ եկան Անձավացյաց աշխարհը՝ մի քարի համբավի մասին լսելով, քանզի բազում դևեր էին բնակվում այնտեղ և խաբում տեղի մարդկանց՝ այնտեղից ախտական դեղեր տալով նրանց՝ ախտերի պղծություններ կատարելու համար, կռանաձայն դարբինների ահավոր հրաշքներով արհավիրքներ էին գործում, որոնց [այդ] աշխարհի մարդիկ սովորած լինելով՝ այնտեղ դեգերում էին քուրայի շուրջը՝ չաստվածներից պատրող ախտերի թարախածոր ծրարներ վերցնելով, ինչպես Կիպրիանոսի ծրարները՝ Հուստինե կույսին պատրելու համար, և այն տեղի անունը կոչում

էին Դարբնաց քար: Աստուծո սուրբ առաքյալն, այնտեղ հասնելով, հալածեց չարի գործակից դարբիններին և փշրեց կուռքերը, որոնք Անահիտի անունով էին: Եվ այս պատճառով դևերի բազմությունը, հյուսիսային կողմի վրա [գտնվող] բարձր լեռան վրա ժողովվելով, անթիվ բազմությամբ քարեր նետելով, սաստիկ ձայներ, ճիչեր և գոչյուն էր արձակում: Իսկ սուրբ առաքյալը մի փոքրիկ խաչ տյառնագրեց և կանգնեցրեց քարե լեռան վրա, և դևերն իսկույն չքացան: Հետագայում սուրբ Հայրապետ Գրիգորիոսն այդ առաքելական խաչը շրջեցնում էր իր հետ մինչև իր՝ այս աշխարհը թողնելը: Իսկ որոշ ժամանակ անց [այն] դրվեց Հայոց Տրդատ թագավորի գերեզմանին: Եվ այն տեղը, որտեղ դևեր կային, [գտնվում է] վեմերի լեռնամիջում, Տիգրիս անունով մեծ գետի ափին, այն ամուր բերդի, որ կոչվում է Կանգվար, և Ագռավաց քար անունով մյուս [բերդի] մոտ, որտեղից՝ ամրոցի լեռներից, բազում ջրեր, գարնանը հոսելով, գալիս անցնում են Տիրուհու տաճարի հիմքի մոտով և խառնվելով օժանդակում մեծ Տիգրիս գետին: Այնտեղ սուրբ առաքյալն, իր իսկ ձեռքով դնելով Սրբուհու տաճարի հիմքը, շինեց մի փոքրիկ եկեղեցի, այն Սուրբ Աստվածածին անվանեց, նրա մեջ դրեց Տիրուհու պատկերը և այն տվեց սուրբ կանանց. և այնտեղ գլխավոր նշանակեց Հուսիկի քրոջը և Որմզդատի ու Մաքովտրի քրոջը. և այլ կանանց էլ նրանց ձեռքի տակ է դնում. և վանքի խուցերն է շինում, [կանանց] հրամայում տեսուչ լինել հավատացյալներին, այնտեղ քահանա կարգում իր աշակերտներից մեկին և տեղն անվանում Հոգյաց վանք՝ Տիրամոր և սուրբ Կույսի անունով, որովհետև Աստված բազում սքանչելիքներ էր այնտեղ կատարում սուրբ Կույսի միջոցով:

Եվ ինքը՝ սուրբ առաքյալը, ուղևորվեց Հայքում ավետարանելու և նահատակվեց Ուրբանոս քաղաքում, առաքյալի անվամբ Բարմա կոչվող վայրում: Իսկ Հուսիկի քույրը՝ Մարիամ անունով, անցավ գետի մյուս ափը, մի շատ փոքր քարաժայռի ստորոտում իր խուցը շինեց և առանձնանալով վախճանվեց: Եվ նույն տեղում տեղի տեսուչներ կարգեց քույր Աննային, Մարթային և Որմզդատի ու Մաքովտրի քրոջը: Իսկ Աննան իր խուցը շինեց ձորի մյուս կողմում, որ Դարբնաքար են կոչում. այնտեղ առանձնանալով՝ վախճանվեց՝ տեղի տեսչությունը Մարթային տալով: Եվ Աստված բազում նշաններ և սքանչելիքներ էր կատարում սուրբ կանանց ձեռքով: Ուր սուրբ Գրիգորը հետագայում գալով վանք հաստատեց, եկեղեցիներ շինեց. բայց Սրբուհու տաճարը չքանդեց, քանզի առաքելական ձեռքի գործ էր՝ թողնելով այն ի փառս և ի պատիվ Ամենասուրբ Երրորդության. և մինչև այսօր էլ կա, որտեղ բազում բժշկություններ և ոչ սակավ ուրախություններ են լինում: Եվ լուսավորում է բոլոր ախտահարներին, որ հավատքով ու հույսով գալիս են այնտեղ՝ դիմելով Միածին Բանի ծնողի բարեխոսությանը՝ իրենից ծնված իր Տիրոջ և բոլորի Աստուծո առաջ: Լիանում են պարգևներով և Սուրբ Հոգու ողորմությամբ՝ փառավորելով Ամենասուրբ Երրորդությանն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՎԱՐԴԱՎԱՌԻ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ

Լուսավոր և պայծառ է խորհուրդն այս մերձավոր տոնի և տիեզերական ցնծության ավետիս է հնչեցնում երկնքով մեկ: Գերապայծառ ճառագայթող լույսով պարուրված՝ զվարթ և ուրախ եմ տեսնում քրիստոսասեր հավատացյալներիդ միասնական հավաքը: Նորահրաշ արփիափայլ լույսով պսակված, տոնիս խորհուրդը պայծառ ձայնով ընդմիշտ հրաշացնելով՝ արթնանում են մեր մեջ ցնծության երգեր. և Առաջինից աղբյուրացած առաջին լուսավոր բնությունների երկնագումար դասերը՝ Վերին Սիոնից, և Վերիններին պարակցող երկրավոր խմբեր, բոլորի փրկության համար համախմբված, վայելչացնում են հրաշքը բերկրալից ձայնով:

Արդեն իսկ ոչ միայն մեր այս բանական բնությունը և առաջնամիտ ու մաքուր հրեշտակներն են այս տոնի գովեստն հռչակում, այլ գրեթե բոլոր տարերքներն էլ միասնաբար, դարձած այս թագավորական օրվա ընծայաբերներ, պայծառակերպված հրաշագարդում են նրա փառքը: Քանզի ամեն ինչ, այս բարի տոնի ժամանակ գեղեցկապես միասին ընթանալով, զվարճացնում է ամբողջությամբ միտքն ու զգայությունները, որոնց հետ նաև՝ բոլոր անշունչներին և անշարժներին: Որովհետև այսօր Նոր Սիոնի վրա հրեշտակային դասերի օրհնություններն են քաղցրանվագ հնչում պայծառահրաշ լույսով [պարուրված]. և Քրիստոսի Գալստյան փայլումը հավատացյալներիս է փարվում: Ըստ մարգարեի՝ երկինքն ու երկիրը ամբողջապես նորոգվում են, և լեռները ցնծում են Տիրոջ առաջ [տե՛ս Սաղմ., ՂԷ 9]: Ոչ միայն մեր էությանը խառնված կենդանի լույսի հորդացող օրհնություններով են տարա-

մերժվում անեծքները, և տարրերը առաջին հույսով նորոգվում հրաշափառության մեջ, այլ գրեթե ակնհայտորեն բոլորին երևացող վայելչազարդված բնություններն այս պայծառ տոնն իմանալի և զգալի փառքով են պսակում: Քանզի այժմ երկինքն ի վերուստ պայծառ զգեստներ է հագցնում իրենց ընթացքով շարժվող լուսավորներին և ջահավառում է ընդհանուր այս աշխարհը վճիտ և մաքուր լույսով զգալի: Իսկ հավատքի բարձրացրած խորանը, երկնքի նման կամարաձև շրջապատելով հավատացյալներին, անստվեր Լույսի անապական ճառագայթն է բացափայլեցնում մեր բանական բնության հոգևոր աշխարհում:

Այժմ պայծառալույս արեգակը, վերին կամարին հասած, հրաբորբոք ճառագայթներով վանում է հյուսիսի [սառնությունը], ջերմություն տարածում երկնքով մեկ՝ կենդանածնելով մեր զգալի բնությունը: Իսկ արդարության Արեգակը, հավատքի խորանի վրա փայլելով, լուսաբորբոք հոգեռանդ լույսով հրավառում է հավատքի անթյուրելի տարփողներին՝ կենդանագրելով էական լույսի կնիքով: Այժմ լուսնի լուսավառ բոլորակը և աստղերի մաքուր հույլը հրաշազարդում են երկնային բուրաստանը և իրենց շարժման մեջ ճառագայթակերպում տիեզերքը լուսարշավ ընթացքով: Իսկ հավատքի լույսի արմատն ու աղբյուրը՝ մեր բնության երկնքով մեկ բարեբանյալ պտուղ Աստվածածինը, իր կուսության մաքրապայծառ լույսով, և իր հետ վառած մեծաջահ սուրբերին՝ Երրորդության լույսի հոգևոր աստղերին, տիեզերքով մեկ շրջափայլում է որպես հրաշապայծառ ճառագայթ: Այժմ ամպերը, տերունական հրամանին սպասարկելով, արևելքից՝ լուսատեսակները և հյուսիսից՝ ոսկեճաճանչները, իրար վրա կուտակված միագույն թանձրության մեջ, փայլակնացայտ, որոտընդոստ, ցողաբուխ առատությամբ հագեցնում են տիեզերքը: Օդի

հոսանքներն էլ, օծված մաքրագույն բյուրակերպյան ծաղիկների և տունկերի երփներանգ զարդերով, պսակում են պայծառազարդված աշխարհը: Իսկ առաքելական ամպերի երկնքով մեկ լեռնացած բազմաճառագայթ կուտակումներն Ավետարանի ահեղ որոտմամբ, փայլակնաբորբոք հրակեզ զորությամբ, Աստուծո գիտության ողորմության անձրևն են մատռվակում մեր բնության դաշտի հովիտներում. նաև Հոգու կենդանարար օդի շունչն են տարածում բանական բույսերի բերրի աճման համար և քաղցր պտուղով վայելչացած անուշահոտ ծաղիկների վրա:

Այժմ երկիրը վայելչացած պայծառակերպում է մեր Աստուծո երևման ժամանակ՝ պսակակապ թագազարդարված, տերևազգեստ բույսերով և տունկերով ծաղկազարդված, և ծաղկավետված լեռները ծիրաներփյան ցնծում են Տիրոջ առաջ: Անուշահոտ են դառնում նաև ճահիճները, և դալարավայրերում կենդանիների խմբերն են խայտում. և հավքերն, օդում վայելչացած երևալով, քաղցրանվագ հնչեցնում են անտառները: Իսկ մեր բանական բնության երկիրը լուսազարդված ցնծում է Աստուծո գալստյամբ՝ զարդարված մշտազվարճ առաքինության նորափետուր ծաղիկներով, և, բարձրանալով հավատքի լեռը, տոնասերներին պսակում է ոսկեճաճանչ իմաստության ծաղիկներով. և աստվածագիտության բուրումը երկնախոհների միտքն ամբողջապես լցնում է անուշահոտությամբ: Քաղվում են նաև անմահության պտուղներ՝ սրբությամբ քաղցրացնելու հոգու զգայարանները: Նաև պարում են մաքրազգեստների լուսատեսակ դասերը Եկեղեցու շուշանազարդ վայրերում և Աւետարանի քաղցրաձայնության նվագները հավքերի երգերի պես ավետալուր հնչեցնում բոլորի համար:

Այժմ ծովը, վրդովմունքի բարձրադեզ լեռնակուտակ ալիքներից հանդարտված, տերունի ոտքերի համար ընթացքի ասպարեզ է հարդարում կոհակների վրա. և գետերի հոսանքներն առավելապես տարածվում են տիեզերքով մեկ. և, ականակիտ աղբյուրների քաղցրաբուխ ծավալմամբ զովացած, հրճվում են էակները, զի Աստված է աշխարհ եկել: Իսկ մեր բնության ներքին իմաստության ծովը, երբեմնի չար հողմերի անդնդապտույտ փրփրատեսակ ալիքներից հանդարտված, ի վերուստ շողացող ճառագայթներով հոգու բնության ընթացքն է անվայրափակ հարդարում իր մեջ. և ավետարանական գետերի տիեզերագնաց ծավալմամբ կենաց աղբյուրից անհատաբար հորդացող անմահության հոսանքները, Աստուծո՝ մեզ երևալու պահին, պարածածկում են տիեզերքը խաղաղության ողջույնով:

Այսպես է նկարագրվում այս տոնի պայծառակերպությունը՝ այսպիսի հրաշքներով: Սա է, արդարև, ցնծության և ուրախության օրը, որ Տերն արարեց. սա է Աստուծո մեծ փառքի ծագման օրը, որը նոր արքայության սկիզբն է և էական Լույսի հայտնությունը և հավիտենական հույսի նկարագիրը: Սա է սուրբ Միաշաբաթի օրը՝ տերունական հարության լույսով պսակված. նույն օրը նաև Սուրբ Հոգին իջավ վերնատուն՝ պայծառ լույսով շրջափայլելով, և հրաշազարդեց այնտեղ գտնվող երկնախմբերի դասերը:

Սա Մովսեսի կողմից անվանվեց Առաջին Օր, երբ Սկզբնածինը ցրեց խավարը, և այս բնությունն ամբողջովին վայելչացավ լույսով, իսկ մարգարէի կողմից՝ Ութերորդ Օր, որ նշանակում է նույն Առաջինը. և Ութերորդ է [անվանվում] մեծ և աներեկո Առաջին Օրվա համար, երբ ճշմարիտ աշխարհի հարատև աստվածային լույսով մաքրվածներին անլուծանելի կյանքն է ընձեռում, որի՝ այնտեղ

[գտնվողներին] լուսավորող պայծառ ճառագայթները փայլում են այսօր, երբ Փրկիչը մեր բնությամբ ճառագայթեց Աստվածության Լույսը Թաբոր լեռան վրա՝ լույսի փրկական փայլումը որպես առհավատչյա [թողնելով] սուրբերի աստվածանմանակերպ հարության համար, որը և տոնում է Եկեղեցին հրաշափառ ցնծությամբ:

Սա Տաղավարահարաց տոնն է, որ օրինադրեց Մովսեսն Իսրայելի ելքից հետո, յոթներորդ ամսի տասնհինգերորդ օրը, երբ յոթներորդ օրը, տաղավարներում բնակվելով, համախմբված տոնում էր Իսրայելը՝ արմավենյաց ճյուղեր, բարդիների ճղեր և սաղարթազվարճ ոստեր ու ընձյուղներ տանելով՝ ի հիշատակ իրենց՝ դեպի Սինա գնալու խորանաչու ընթացքի և որպես ընծայաբերության գոհության աստվածային երախտիքի, որ վերցնելով կրեցին՝ հասնելու աստվածակերպ բուրաստանատեսակ ավետյաց աշխարհը: Սա նրանց օրինադրած ստվերակերպ տոնն է, որն Ավետարանի ճշմարտությունն էր նախագրում, քանզի հենց որ լքում ենք մեր իմանալի Եգիպտոսը [ի նկատի ունեմ մարմինը ողողող խավարաբնակ աղտեղի ախտերի տիղմը]՝ Ավետարանի լույսի հրափայլ սյունով առաջնորդվելու, որին հովանի է Հոգու ամպը, աստվածագիտության հոգևոր լեռն ենք բարձրանում, ուր Աստված է, որ ամենայն նյութականն իր մեջ բոցակիզում է հրով: Այնտեղ, ինչպես հայելու մեջ, Տիրոջ փառքը տեսնելով՝ նույն Լույսից կենդանակերպվում ենք և, փառքից ի փառս ճառագայթվելով, օրինադրվում այս կենցաղի նյութական շինվածը լքել և, դեպի աննյութ հարկը փութալով, այս ապականող մարմնի անդամներն առաքինության խորանի վերածել: Սա Տաղավարահարաց տոնի պես յոթնօրյա շրջագայությամբ տոնում ենք յոթներորդ ամսի տասնհինգերորդ օրը՝ մեր զգայությունների մեջ եռակի մաք-

բությունն ընդունելով՝ թե՛ գայթակղությամբ, թե՛ պատերազմով ներս ընդունած մեղքերի խայթոցներից: Եվ այս յոթ օրը տոնում ենք տաղավարներում՝ արմավենյաց ճյուղեր և կանաչազգեստ ոստեր և ընձյուղներ բռնած. և այս յոթօրյա շրջագայության ընթացքում, այս աշխարհին պատկանող կյանքի բոլոր հոլովումներն արտաքսելով, Աստուծո նման հոգով ենք ապրում և, անմարմնական առաքինությունների ոստերի աճմամբ դեպի հրեշտակային բարձունքը վերընձյուղված, որպես արմավենիներ Աստուծո գավթում, ծաղկում ենք՝ հրավիրվելով դեպի Վերին Աւետյաց երկիրը՝ Աստուծո Սիոն քաղաքը, դեպի մայրը կենդանի արարածների և անմահների բանակատեղը, դեպի լույսի առագաստի անքակտելի խորանը, ուր հարազվարճ խնդությամբ հնչում են տոնախմբվածների ձայները:

Այս ամենը մեր մեջ, որպես օրինակ, տպավորված էր նախապես, որն Իրենով ամբողջացրեց Քրիստոս՝ Գրի լուծիչը և խորհուրդի կատարիչը, որն այս տոնի օրը լեռան վրա աշակերտներին հայտնեց անմերձենալի Աստվածության նազելի փառքի ծայրագույն լույսի ծագումը՝ կենդանարար աղբյուրացած մարմնից փայլակնատարած ճառագայթարձակ փայլմամբ: Եվ դարձել էր Թաբորը որպես նոր Սինա սուրբ լեռ և լուսեղեն աստվածաբնակ վայր՝ հրավառ և ամպով պատված, նաև՝ նոր երկինք՝ Աստվածության ճառագայթներով բարձրացած երկրի վրա և պայծառազգեստ պսակված արփիափայլ հրաշքով: Այնտեղ են նաև հրեշտակների զորքերը՝ սերովբեների բյուրավոր բանակներ գումարած, որոնք, տերունի ոտքերի ներքո սոսկացած, հրափայլ թևերով պարփակում են արքայական աթոռը: Քանզի ուր Վերնստյալն է, այնտեղ էլ Նրա աթոռն է, այնտեղ էլ բարերջանիկների խմբերն են՝ առաքյալների և մարգարեների պայծառ և մեծ լուսազգեստ դասերը՝ անմերձենալի լույսի հպավորությամբ աստվածակերպված և բացերես առ Աստված հայելով աստվածացած. ավելի ճիշտ է ասելը՝ Աստված միավորվել է աստվածներին և հայտնել [Իրեն]: Այնտեղ են նաև պայծառազգեստ Եկեղեցու սյուները՝ զարդարված աստվածածագ հրի բորբոքմամբ և միավորված անշիջանելի Լույսի հետ. սուրբեր, որոնք փայլում են տիեզերքում Ավետարանի լույսի աշխարհարձակ ճառագայթներով: Այնտեղ Մովսեսը՝ կանխատեսը մեզ վրա Աստուծո փառքի արեգակի անփոփոխ և անմատույց լույսի առաջին ծագման, իր տենչալի լույսը տեսնելով, մարմինը վարագույրով ծածկած, ցնծության մեջ հարություն առնելով, գալիս ողջունում էր նույնահրաշ կերպարանքով՝ ավետելով մեզ, որ նույնպես պիտի կենդանակերպվենք ու նորոգվենք Աստվածորդու հարությամբ՝ Նրան վկայելով որպես Տեր մահու և կենաց: Եվ Եղիան, հրէկառքով վեր բարձրացած, կենդանի էակների աշխարհից ողջույնի է եկել մերատիպ էական Լույսին՝ վկայելով, թե Տերն է վերիններին և ներքիններին, խոսում է փրկության դռան մասին, որ Երուսաղեմում է՝ ավետարանելով մեզ, որ հուսացած հարության ժամանակ ամպերով պիտի տարվենք և ելնենք դեպի Աստվածության հուրը: Այնտեղ մեծ հայրական խորքերի հազարապետը՝ խորանով առագաստված վերին արքունական լույսի փակողն ու բացողը, սարսափած վերաձայնում էր Երրորդության խորհուրդը, եռակի տաղավարներով և տիեզերագոչ փողով հրավիրում բոլորին Վերին Երուսաղեմի լույսի խորանը: Այնտեղ էր, որ վերին Արքայի զորության զորքերը, ազգերի թագավորները և աշխարհի իշխանները՝ Որոտման որդիները, որոնք, հովանի առած [Սուրբ] Հոգու ամպը, բարձունքներից ահեղ որոտմամբ հնչեցրին հայրական ձայնը տիեզերքով մեկ՝ օրհնության ցողով արբեցնելու ծարավիներին

անմահության ջրերով: Արժե՞ շարունակել. ասեմ ավելի համառոտ ձևով՝ այնտեղ է Երրորդության բոլոր գերակա փառքերի բացածագումը: Քանզի Հոգին լուսեղեն ամպերով հովանի եղավ, և Հայր Աստված փառքով որոտաց, և մարմնացյալ Բանը տնօրինված կենդանարար մարմնով փայլեցրեց այնտեղ հայրաբուն փառքի էական ճառագայթը. քանզի Իրեն միավորեց մարմինը, ինչպես որ ասված է՝ Բանն Աստված Հոր մեջ է և Հորից, էն՝ էականից, լույս՝ լույսից, կյանքը՝ կյանքից, Նա է երանելին և միայն բարին, Ում նայում են բոլորը, Ում տենչում են բոլորը, Ում մեջ չկա այլայլում և փոփոխում: Հոր նույն բնությունն է, փառքի ճառագայթը, էության կերպարանքը և բարերարության պատկերը, որ էն է և միշտ էն՝ մտքից ու խոսքից վեր պատճառ ունենալով միշտ էն: Գթածաբար կամենալով փրկագործել մեր բնությունը՝ մեզ կերպակից է դառնում՝ չբաժանվելով Աստվածությունից: Որովհետև իր բնությամբ մարմնին միացավ՝ նրան իր հետ խառնելով և աստվածացնելով, սակայն մնալով ինչպես կար, ո՛չ շփոթվելով, ո՛չ էլ անխառն մնալով, այլ՝ և՛ խառնվելով, և՛ միավորվելով բնությամբ՝ անշփոթահար և անբաժանելի, որ էերի մտածությունից վեր է: Որովհետև Կույսի որովայնի մեջ անփոփոխելի լույսի ճառագայթը փոփոխական նյութով ճառագայթեց՝ որպես մի կայծակ այնտեղից նույնակերպ հրաշաբուսած, և մեր բովանդակ հոգին, մարմինը և միտքն անապական և աստվածախառնությամբ միաբուն դարձնելով՝ էմմանուելը ծնվեց Կույսից՝ չանջատվելով Հորից՝ ամբողջապես մնալով Երրորդության մեջ և անբաժան՝ երկրից. քանզի [միաժամանակ] և՛ Կույսի գրկում է աստվածացած մարմնով, և՛ սրովբեական կառքն է իսպառ լցնում մարմնացյալ աստվածությամբ: Քանզի Նա ամեն ինչի մեջ է, և լի են նրանով երկինք և երկիր. և Նա, որ անդին է ամեն ինչից, առանց մեղքի և ապականության մեր բոլոր հոգեկան և մարմնական կրքերի միջով ճանապարհորդեց մի դեմքով, մի կամքի շարժությամբ՝ մի և նույն Աստված՝ մարմնավորված և բոլորից անդին: Նրա անբաժան միությունը գերակատար լրությամբ բացածագեց այսօր, նույն մերակերպ աստվածացած մարմնի մեջ էական փայլատակող ճառագայթն աղբյուրացրած՝ լուսակերպելով մեր մթնած խավարային բնության սև աղջամուղջը, մեզ Իր միջոցով Հորը միացնելով, որի մասին էլ ասաց. «Որպես Դո՛ւ, Հայր, Իմ մեջ ես, և Ես՝ Քո մեջ, նույնպես և նրանք թող մեր մեջ լինեն» [Հովհ., ԺԷ 21]: Որովհետև, լեռը ելնելով, մեզ Իր հետ բարձրացնում էր դեպի հայրական աթոռը. և, մարդկային մարմնի դեմքն արեգակնափայլ լուսազարդելով, մեր նվաստ մարմինն էր աստվածակերպում Իր փառավոր մարմնի նմանությամբ, որի հետ նաև լուսեղեն ամպի կամարաձև շրջափակմամբ Իր հետ առագաստում էր մեր [բնությունը] Սրբություն Սրբոցի մեջ՝ վարագույրի ներքո, ինչպես ասել էր, թե՝ «Ուր Ես եմ, այնտեղ և Իմ պաշտոնյան կլինի» [Հովհ. ԺԲ 26]: Եվ հայրական ձայնն, ի վերուստ սիրելի Որդի վկայելով Նրան, որպես մեր որդեգրության առհավատչյա, դեպի լույս հրավիրվածներին ավետիս էր տալիս նաև, առաքյալների և մարգարեների խմբերով իր ծայրագույն լուսափառքը ճառագայթելով, բոլոր վերևիններին և ներքևիններին, կենդանիներին ու մեռյալներին ցույց էր տալիս, թե Վերջին Օրն ինչպես են տեսնելու Իրեն՝ Աստծուն, աստվածացածների մեջ, ամպերի վրայով զորությամբ և փառքով գալիս [Մատթ., ԻԴ 30], այստեղ մաքրվածներին այնտեղի փառքը պարգևելիս. որ այս մեծ ահավոր օրը, պսակելով այս տոնը լուսահրաշ փառքով, արեգակնակերպ փայլում է երկնքով մեկ՝ Իր մեջ ունենալով եռապայծառ Լույսի եզա-

բուն ճառագայթը: Երրորդության այս Լույսը Միածինն այսօր Թաբոր լեռան վրա Իր շուրջ փայլեցրեց՝ ճառագայթելով արարածներին, որով երկինքը ցնծաց, և երկիրը պայծառացավ, երկնքի վերնահարկերը բացվեցին, և լույս հոսեց դեպի ստորին խորանը, երկնքում հայրական ձայնը հնչեց, տիեզերքը որդեգրվեց, Հոգու ճառագայթը ծագեց, երկնածինները լուսազգեստվեցին, հրեշտակների խումբը պարեց երկրի վրա, հրեղենների դասերը երկնքի դռնով մտան, երկնքի օրհնությունները երկրի վրա հնչեցին, երկիրը երկնանման զարդարվեց, դրախտի դռները բացվեցին, այնտեղից արտաքսվածը պարեց նրա մեջ, կենաց ծառի հոտը բուրեց, երկիրն անմահության ծաղիկ բուսեցրեց, կյանքի լույսը ծագեց, մահու ստվերը փախավ, արդարությունը թագավորեց, մեղքերի իշխանությունը լուծարվեց, ավետարանական փողը գոչեց, տիեզերքը քնից զարթնեց, Աստծուն մարմնով եկած տեսան և Նրա հետ աստվածացան:

Այսպիսի բյուր բարիքների օրինակ է այս մեծ և պաշտելի տոնը: Ինչպես նաև հույժ վայելուչ է տոնիս անունը, որ տալիս է Եկեղեցին, քանզի Վարդավառ է կոչում, որ, արդ, ավար է նշանակում, նաև կոչում է վարժարան: Այլ ինչո՞ւ է հույնը սա Պայծառակերպության և Պսակաց տոն անվանում, իսկ Հայաստանյայց ազգը՝ Վարդավառ. սրանք [երկուսն էլ] միևնույն հրաշափառ պայծառությունն են հնչեցնում, որ նախապես Բանն էր արձանագրել: Այս տոնին բովանդակ երկիրը ծաղկավետվել է. մեր բնությունն էլ փթթել է հավիտենական ծաղիկներով և Քրիստոսի փառքի ճառագայթարձակ փայլմամբ, եկեղեցիները պայծառազգեստ վայելչությամբ են պսակվել, և առաքինության լուսահրաշ վարդերով ու շուշաններով տոնասերների ոսկեվարսյալ գլուխներն են վայելչացնում:

Ըստ այսմ՝ հիրավի է Վարդավառ անվանում սա Եկեղեցին և Պայծառակերպության ու Պսակաց տոն: Իսկ արդ, ավարն ու վարժարանն այլ բարձրագույն խորհուրդ են հաստատում, որը տրամախոհները Հոգուց են ճանաչում: Քանզի մեր մեջ Քրիստոսի Հարության լույսի ծագումից հետո, սուրբ Հիսնեկի վերջում, վերնատանն առաքյալների վրա Հոգու շնորհները զեղվեցին, նույն օրը Սինայում աստվածագիծ [Օրէնքի] գիրը Մովսեսին ընձեռնվեց, որ տոնում էր Իսրայելն ամեն տարի՝ այն կոչելով Պենտեկոստե, նույն օրը նաև առաքյալների մեջ իր հոգու շնորհները կենդանագրելով՝ գիրը տեղի էր տալիս, և, Ավետարանի բազմաձայն լեզուներով միաձայնաբար ձայն հնչեցնելով, լսողների հինգ հազարանոց խմբերի հույլերին էր աշակերտում՝ նրանց մասին գրելով որպես նոր Իսրայելի. երկնավոր մշակի քրտինքի առաջին կաթիլները և առաքելական ոստերի ծաղիկները, որոնք, գրի ծածկույթը մերկացնելով, հոգու լույսով զգեստավորվեցին՝ հնազանդ Աւետարանի օրինադրություններին, որով առաքելական հրամանն այս երկրորդ հիսնյակի մեջ, որպես վարժարանի փակելով, վարժում էր նրանց հոգևոր կրթության վարժությունների հրահանգներով, ըստ իսրայելյան երբեմնի շրջացանական մաքրության, Աստուծո երևման ժամանակ: Սայապես նաև նրանք են արժանանում որդեգրության շնորհի՝ աղոթքի սրբությամբ, մաքրության ավազանի լույսով. ըստ այսմ՝ սա վարժարան կոչելը բնավ այպանելի չէ: Իսկ արդ, ավար է կոչվում, քանզի առաքելական օրինադրությունների վերջում՝ Տաղավարահարաց տոնի նույն այս օրը, Երուսաղեմում Եկեղեցու առաջին խորանը կանգնեցրին՝ այնտեղ ավազանի լվացմամբ նորընծաներին Լուսո Հորը որդեգրելով և վերափոխելով ահարոնյան ծերացյալ պաշտամունքի հնությունը Քրիստոսի քահանայության նորոգության և

գրի կերպը՝ հոգու շնորհների, և մարմնի թլպատությունը՝ մտքի մաքրության, և առօրյա լվացումները՝ հոգևոր լվացումների մշտնջենավոր ավազանի մաքրության, և զոհերի և պատարագների ընծաները՝ հավատացյալների բանավոր պաշտոնի՝ անձերը վերնագույն սեղանի վրա բոլորապտուղ ընծայելով Բան Աստծուն: Ըստ այսմ՝ նաև այս տոնի օրինակն Աւետարանի լույսով որպես խորհուրդ պայծառակերպեցին՝ փոխակերպելով ստվերի տաղավարը ճշմարտության առագաստի, և Իսրայելի՝ լեռների գագաթներին տաղավարված անճշմարտության ոստասաղարթ և ծաղկազարդ տոնախմբության [փոխարեն]՝ նորածնյալներին օրինադրեցին բարձրանալ հավատքի լեռը՝ Երրորդության լույսով պսակված, Հոգու ճառագայթի ծիրանին հագած և երկնածաղիկ առաքինության լուսասաղարթ ոստերով քաջուղեշ և հարափթիթ պտղավետված՝ նոր Սիոնի լուսո խորանում փրկության ելքը մշտապես տոնելու, որպես արդարությամբ արդարև տղայացածներ և կատարյալ գութի հասած՝ պայծառ հավատքով հոգիացածներ. և, որպես հարսանյաց մանուկներ գալով և անմահ Փեսայի հետ ճաշի սեղան նստելով, լուսո հարսնարանում անմահության կյանքն են ճաշակում և, դասագրված անմահների երամին, առագաստի երգերն են երգում՝ «Օրհնյալ է Տիրոջ անունով եկողը» [Մատթ., ԻԳ 39], և թե՝ «Մեր Տեր Աստված երևաց մեզ, ուրախությա՛մբ արեք այս տոնը» [տե՛ս Սաղմ., ՃԺԷ 27]:

Այսպես, ըստ երկնային ակնարկության՝ սուրբ առաքյալները, օրենքի բոլոր ստվերատեսակ երևմունքները քանդելով, պայծառ ճառագայթներով բացածագեցին այս տոնի ճշմարտության լուսո խորհուրդը. նույն օրը հավատացյալները հայտնապես տեսան Սուրբ Հոգուն՝ խմբերով գալիս դեպի լույսի ավազանը և սուրբ սեղանը՝ Աստվածորդու փրկական Մարմնի և Արյան աստվածային կենարար խորհրդի վրա. սրա հետ և այլ աստվածաշնորհ առաքելահրաման պարգևներ՝ նորընծա պատարագների աղի օրհնության և ողջ Երուսաղեմում բոլոր աստվածապարգև ավետիսների խորհուրդը կատարելու: Այս տոնի օրն իրենց մեջ բաժանեցին տիեզերքը՝ լինելու իշխաններ երկնքի ներքո՝ ըստ Սուրբ Հոգու կանխասացության՝ «Երկնավորի մոտ հավաքել թագավորներին» [տե՛ս Սաղմ., ԿԷ 15] և ավար առնել բոլորին: Ուստի միմյանց ձայնում էին միախումբ երկնավոր նահատակների աշխարհագոչ փողերով՝ ասելով. «Արդ, ավար է, ելե՛ք տիեզերքով մեկ՝ գերությամբ գերելու, ավար առնելու, պարգևներ բաշխելու և տալու մարդու որդիներին». ինչպես որ գրում է սրանց խորհրդապետ Պողոսը, թե՝ «Բոլոր մտքերը գերում ենք ի հնազանդություն Քրիստոսի» [Բ Կորնթ., Ժ 5]: Սրանով ցույց տվեց, որ այս տոնն, արդ, ավար է, որը վարդավառ է կոչում Եկեղեցին՝ այդ օրն առաքինության լուսերանգ և հուսահոտ բոցատերև վարդերով հարսնազգեստ պսակվելով և հրճվելով: Սա Առաջին Եկեղեցում առաքյալների կողմից որպես ավետաբեր տոն օրինադրվեց, որը չի մտնում ընթերցվածների շրջանի մեջ մյուսների հետ, երբ մարգարեների պատմած աստվածային տնօրենության խորհուրդն է վերաձայնաբար տոնվում. քանզի ոչ թե անցածների մասին է, ինչպիսին որ նրանք են, այլ հավիտենական հանդերձյալն է հարազվարճ ցնծությամբ կրում իր մեջ՝ որպես մշտապայծառ փառքի գերակայություն, որը նույնիսկ մարգարեները չճանաչեցին, ինչ այնտեղ Աստված պատրաստել էր Իրեն սիրողների համար. քանզի սա Ութերորդ, որպես Առաջին և Վերջին, Օրվա, անթառամ մշտնջենահոս լույսով պսակված, հավետահրաշ և ճառագայթավետ տոնն է, որ սկզբնավորում է Դատաստանի

Ատյանից և տևում մինչև անսպառ մշտանորոգ հավիտյանները՝ տոնասերների բացախմբերի շարքը միացնելով իր լուսաթաղանթ առագաստված ծոցին, այստեղ մաքրվածներին բաժանելով էի հետ աստվածացածների անսահման ուրախությունների հարատևությունից, որը ոչ ոք չի կարող բացատրել, թե ինչպես կլինի, [այլ միայն]՝ Աստված, որ ամենայն է ամենայնում:

Իսկ մենք, այս աստվածահրաշ լուսավորությունների օրը տոնախմբված, կնքենք մեր խոսքը. Քրիստոսի փառքի պայծառազգեստ լույսով պսակված՝ սուրբ առաքյալների և մարգարեների խմբի հետ արարչական տնօրենությանը սպասավորենք՝ այս լուծանելի մարմնի տաղավարը մաքրության խորան դարձնելով: Որի մեջ Իրեն՝ մի և նույն Քրիստոսին ընդունելով՝ Երրորդության անպարագիր լուսավորությունն ընկալենք մեր սրտի մեջ. և այդպես լուսերամների հետ ամպերով հափշտակվենք Տիրոջն ընդառաջ՝ նույնատիպ կերպով աստվածացած օդային տարածություններով՝ զվարթ և պայծառ կանգնելու առաջագահ դասի մեջ՝ որդեգրության պարգևն առնելով նույն Իր՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի լույսի մեջ թագավորողների հետ. Նրան փա՜ռք հավիտյանս հավիտենից. ամեն:

ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄՅԱՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Սուրբ Հռիփսիմյանների կյանքի, վարքի և զանազան վայրերի մասին, որ գրված չեն բազմաքանակ ճոխաբան պատմությունների մեջ, քննության առնելով բազում հույն մատենագիրների և ըմբռնելով ճառերի միտքը, որոնք կեղծիքից հեռու էին և ճշմարտությամբ լի, կարգեցի քեզ համար այս գրվածքի մեջ, որին, կարծում եմ, միտք ունեցողներից ոչ ոք չի ընդդիմանա, բացի նրանից գուցե, ով, կեղծիքը սիրելով, կջանա աղավաղել այս պատմության ոճը: Երբ Ատտիկէում ընթերցում էի ելլադացի իմաստունների ատենաբանությունները, շատ անգամ եմ հանդիպել այս գրվածքի ոճին, որը հարմար էր գալիս մեր այս պատմության հյուսմանը: Մեզ հույժ պիտանի և օգտակար է թվում Դավիթ Հռոմեացու «Եկլեսիաստես» անվանված գիրքը, որ ես թարգմանել կամեցա և ժամանակ չունեցա. մնաց այլ տեղի և կամ իմաստունի: Քանզի ես, լինելով մահկանացու, ծեր և հիվանդոտ, հրեշտակ կամ Բարձրյալի որդի չլինելու պատճառով երկնչելով, ինչպես որ ասում է աստվածային խոսքը, փոքր-ինչ երկրորդեցի նույն այն գիրքը, որ թողել է հմուտ քարտուղար Ագաթանգեղոսը, որն, իհարկէ, չէր կարող բոլոր խոսքերն ու գործերն իր մտքի մեջ ծովացնել և ուրիշներին էլ [ասելիք] թողեց:

Եվ արդ, նույն այդ գրքում պատմվում է, որ սուրբը նույն թագավորական տոհմից էր, ինչ Օգոստոս կայսրը՝ թագավորների ցեղապետը: Գայանեն նույնպես նույն ցեղից էր՝ առաքինի և զարմանալի հոր և մոր դուստր: Առաքելական դասերին նախանձախնդիր լինելով, ինչպես գրում է, նրանք իրենց իմացությամբ շատ մոտ էին նրանց,

որոնց հին համբավ ունեցող գործերը մոռացության չէին մատնել՝ ընտելանալով կամ ծուլանալով, ինչպես որ մեր ժամանակներում է, երբ աստվածապաշտությունը նվաղել է, սրբությունը՝ լռել, իսկ մեղքը՝ գլուխ բարձրացրել: Այլ տղամարդիկ առաքյալների նման լավ գործերին էին նախանձախնդիր, իսկ կանայք զգաստանում էին՝ նախանձելով Աստվածածնին, Քրիստոսի մայրեր լինելով, ինչպես ասաց հայրերից մեկը: Այսպիսին էին նաև սուրբ Հռիփսիմեի ծնողները, որն Ավագանից ի վեր սանն էր սուրբ Գայանեի, որը վանական կույսերի մայրն էր Հռոմում գտնվող սուրբ Պողոս առաքյալի վանքում, որը երանելին իրեն տեղ ընտրեց՝ առաքյալից հրաման ստանալով՝ պարտ և պատշաճ կերպով աղոթելու. և նրանից հետո ուրիշներն էլ աշակերտեցին՝ երեք հարյուր հոգի՝ պահելով առաքյալի այս հրամանը: Եվ լինելով այս վայրի տեսուչը՝ Գայանեն Հռիփսիմեին դաստիարակեց իր մոտ՝ զգաստացած կույսերի մեջ, և երբ նրա աղոթքի պտուղն արբունքի հասավ, տեսնելով նրա հոգու մեծանձնությունը, սուրբ Աստվածածնի աղախինը լինելու պատվին նրան կարգեց և տվեց՝ ուխտերով և աղոթքներով ծառայելու Աստվածածնին: Նրա պարանոցն է գցում նաև սուրբ Հակոբ [Տյառնեղբոր] խաչը՝ տերունական արյամբ ներկված, որը հատվել էր Կենաց Փայտից Պատրոնիկե տիկնոջ խնդրանքով, որը և ինքն էր պահպանել նույն Տյառնեղբոր միջոցով, և մեծ փափագով ու երկյուղածությամբ առավ և գցեց մեծ սուրբ Հռիփսիմեի պարանոցը, ինչպես որ մի ժամանակ Ռեբեկայի ականջներին գինդերը [գցեցին]՝ հարսնանալու հավատքի հայր Աբրահամին. թեպետ և [դրանք իրար] նման չեն, բայց երկուսն էլ Եկեղեցու խորհրդի համար եղավ. և այս մասին՝ այսքանը:

Եվ երբ հուզումնալից ժամանակը հասավ, ազնվական

ծագման և սքանչելատեսիլ գեղեցկության համար նրան, ով աշխարհում նույնպես փայլում էր հոգով, որոշեցին տիեզերապետության թագուհին դարձնել՝ ի պատիվ հռոմեացիների տան: Եվ Գայանեն, հոգու աչքով [այդ մասին] իմանալով, առնում է նրան, փախչում Եգիպտոս՝ Աղեքսանդրիա [քաղաքը]. այնտեղից էլ գնում է Երուսաղեմ՝ երկրպագելու տեղի սուրբ վայրերը: Եվ, մտնելով քարայրը, Սրբուհու առաջ աղոթքներ և պաղատանքներ էին մատուցում, որ օգնի վտանգված և փախցված կույսին, որը նրա աղախինն էր եղել մանկությունից: Այնտեղից գնացին Գեթսեման՝ Աստվածածնի գերեզմանը. և [Գայանեն], այնտեղ աղոթելով, ասում էր. «Մայր Լուսո, Կո՛ւյս անարատ, որ կուսության վերակացու ես և սրբության օգնական, ընդունի՛ր աղերսական աղոթքներն անարժան աղախնուցս. և իմ հոգեորդուն, որ սնեցի՝ քեզ աղախին տալով, զգաստացնելով արդարացրո՛ւ արժանավորապես և մի՛ թող, որ օտարը փորձության ենթարկի նրան, և մի՛ թող, որ աղտեղանա պիղծ թագավորների ձեռքով, որպեսզի մեր՝ քեզ հետ կապած ուխտը չխափանվի: Այլ հիշի՛ր իմ պանդխտությունը և մեր կյանքի ալեկոծումները, որոնք քեզ համար են, հիշի՛ր և քո Որդու և մեր Աստուծո չարչարանքները և ողորմի՛ր մեզ, որի համար օրհնում ենք քեզ»: Եվ, Աստվածածնին երկրպագելով և շատ արտասուք հեղելով, մեկ ամիս մնացին այնտեղ: Ապա [Աստվածածինը] տեսիլքով երևաց սուրբերին, և հրաման ստացան գնալ Հայք՝ Արարատյան երկիրը, Թադեոս առաքյալի վիճակը: «Եվ այն փայտեղեն պատկերը, որ դրված է եղել իմ վերափոխման օրը, ա՛յն փնտրեք՝ ձեր կյանքի ուղին ավարտելով արյամբ»:

Եվ, այնտեղից խնդությամբ դառնալով, եկան Եդեսիա քաղաքը և, երկրպագելով փրկչական պատկերին, ուրա-

խությամբ լցվեցին, և թվաց նրանց, թե մարմնացած Բանն են տեսնում: Դարձյալ սքանչելի տեսիլքը տեսնելով՝ հորդորվում էին ճգնություններին: Եվ կանանց մի մասը, նրանցից բաժանվելով, մնաց նույն քաղաքում, Աբգարի մեծ եկեղեցում՝ կրոնավորելով սուրբ Թադեոսի [դրած] հիմքի վրա: Նույնպես էլ մնացին այնտեղ՝ Դարանաղյաց գավառում, Սեպուհ կոչվող լեռան խորշում, որ անվանվեց Մանյա այրք:

Սուրբերից ավելի քան յոթանասուն հոգի, ասում է պատմագիրը, ելնելով նրանց հետ հռոմեացիների քաղաքից, բնակություն հաստատեց զանազան վայրերում: Իսկ տեղում մնացած քույրերը և Գայանեի Եվզոյի անունով քույրը, քույրերի հետ միաբանված, բարի վկայությամբ նահատակվեցին ամբարիշտ Դիոկղետիանոսի կողմից, որն իր չարության թույնը նրանց վրա թափեց, ովքեր Քրիստոսի վկաներ դարձան՝ մեծ առաքելուհուն մահվան վճռով չբռնելու պատճառով: Եվ բազում տառապանքներով եկան, հասան Բզնունյաց գավառ, Խլաթ քաղաք՝ երեկոյան այնտեղ օթևանելով: Եվ այնտեղից տեղափոխվեցին և գնացին Մոկաց գավառը՝ Սուրբ Խաչ կոչվող վայրը, որտեղ Աստված մեծ սքանչելիքներ կատարեց նրանց միջոցով՝ Եսայու և Դանիելի պատվական սուրբ Խաչով, որի մասին թե՛ ես և թե՛ դու գիտենք, և արժե՞ արդյոք երկրորդել: Երբ առաքելանման քահանաներն ու սուրբ կույսերը հասան Կճավ կոչվող վայրը, որ դևերի պաշտամունքով էր լցված, ընդդիմամարտելով արգելեցին ձիերի մեջ, որ դևերը, զայրացած հարձակվելով, խեղում, այլանդակում, պնչատում էին իրենց պաշտոնյաներին: Այնտեղ առաքելանշան քահանաները, հալածելով նրանց և քանդելով նրանց պաշտամունքային շինությունները, բժշկում էին խեղյալներին, որի համար էլ տեղը Կճավ կոչվեց: Սուրբ Գայանեն

այնտեղ թողեց իր խաչը որպես դևերի ախոյան, ինչպես ավազակի համար, որտեղ և հետո վանք հաստատեց սուրբ Գրիգորը:

Եվ իրենց հայտնի դարձած անվան պատճառով նրանք գաղտնի գնացին Կորդվաց [գավառի] միջով դեպի Սողոփ լեռը՝ Բերկրացվոց գավառում, որտեղ աչացավության ախտով վարակվեցին և երբ աղոթեցին, երկու աղբյուր բխեց, որոնց ջուրը ժանգ ուներ՝ կարմիր էր և սպիտակ. և մինչև այսօր սրբուհիների անունով օգնում է աչքի ցավ ունեցողներին: Բայց այս լեռան մասին ասորիները պատմում են, թե երբ նվազեցին հեղեղների ջրերը, տապանը հասավ այն լեռան գագաթին, որը Սարարադ լեռն է, և նրանց միջով սղոցաձուկն անցնում և արգելակում է նավը. և գյուղաքաղաքի անունը Թմնիս դրվեց, այսինքն թե՝ ութ հոգի ելան տապանից:

Իսկ սուրբերն, իրենց ապահով զգալով, խրճիթներ շինեցին և բնակվեցին: Եվ այնտեղից գնացին և օթևանեցին գետի վտակների կամրջի մոտ՝ Տմորյաց կողմում, ծառավետ ընկուզուտ վայրերում: Եվ, այնտեղից տեղափոխվելով, մտնում են Հայաստան գավառը, Մշկունյաց լեռան խորին խորշի մեջ: Սրա մասին պատմվում է, թե այնտեղ մշկապորտ այծյամներ կան, ուր և, բազում հալածական բորոտներ գտնելով, ընտրյալ քահանաները նրանց բժշկում են սուրբ խաչով, ուր և Տիրոջից աղբյուր շնորհվեց նրանց. և այստեղ ծեր կանայք մնում էին մինչև իրենց մահվան օրը: Եվ, այնտեղից չվելով և կանգ առնելով Բժունյաց սահմանին, մնացին այնտեղ բազում օրեր: Եվ, այնտեղից տեղափոխվելով, բնակվեցին գետի մյուս ափի հորդաբուխ աղբյուրի մոտ՝ քաջալերվելով Սուրբ Հոգու շնորհներով. շատ օրեր անցկացրին՝ զվարճանալով տեղանքի բարեհամբավությամբ: Այնուհետև նրանց մի մասն

այստեղ մնաց՝ այն վայրում, որի անունը Սուրբ Տիկին է:

Եվ այնտեղից առաջ անցան (որտեղից սկիզբ է առնում բովանդակ գետը, որտեղ որ փոքրագույն, անօգուտ ջրերը Կանգվարա լեռներից, որ Ագռավաքար է կոչվում, հոսելով և գարնանային վտակները գետանալով, գալիս են օժանդակելու մեծ գետին, որ Տիգրիս է կոչվում) և հասան մի վայր և [այնտեղ] գտան սակավաթիվ քրիստոնյաների, որոնք նշանակերտած պահում էին Տիրամոր պատկերը, որին ուրախացած երկրպագեցին և Սրբուհուն գոհություն էին հայտնում: Եվ սակավ օրեր մնացին [այնտեղ], քանզի հավատացյալները չկամեցան՝ կասկածանքներից երկվության մեջ լինելով, և նրանք գնացին դեպի Պաղատ լեռան գլուխը, որտեղ, ասում էին, մեծ քանակությամբ դևեր կան, որ մեծարում են Արամազդի և Աստղիկի տունը: Եվ հաճախ պաշտամունքով տոն են անում, որը Պաղատն է: Եվ այնտեղից լեռան զառիվայր, արեգակնահայաց կողմի խոր ձորով մի փոքր գնացին դեպի հարավ, դեպի լեռան այն կատարը, որը վար է իջնում, աստվածների կրակի, անհագ հրի, անդադար այրման տունը. և քարեր էին հոսում հորդաբուխ աղբյուրի ակունքից, որ բխում է լեռան ստորոտում՝ բարձր ապառաժի առաջ, այն տեղում, որը կոչվում է Բութ: Քանզի քույրը կրակն էր վառում, իսկ եղբայրը՝ աղբյուրը [բխեցնում]:

Եվ քարայրում որջացած ապրում էին երկու վիշապ՝ դիվացած և սևացած, որոնց կույս աղջիկներ և անմեղ պատանիներ էին զոհաբերում: Դևերը, նրանց արյամբ զվարճացած, նաև բագիններով, հրով և աղբյուրներով զարհուրելի տեսարան և փայլատակում, թնդյուններ և դոփյուններ էին ներկայացնում: Եվ խոր ձորերի մեջ լցված էին մահաբեր թույներով լի օձեր և կարիճներ: Սուրբ կանայք այնտեղ են հասնում և, աղոթքներով ու արտասուքներով

երկինք հայելով, առնում են սուրբ նշանը և պահում աղբյուրի վրա, և դևերը փախչում, մտնում են բագինը՝ վա՛յ-վա՛յ աղաղակելով: Եվ լեռներով մեկ ուրիշ ձայն չէր լսվում, բացի [նրանց] վայումի ճիչերից: Եվ նրանք անցնում են այն ձորի միջով, որտեղ մինչև այսօր քարացած մարմնով օձերը մնում են: Եվ բագիններից փախած դևերն ընկնում են Մարաց երկիրը: Եվ պատկերը փչրեցին սուրբ խաչի զորությամբ, որը գյուղի բնակիչները տեսնելով՝ սուրբ երանելիների միջոցով հավատացին Քրիստոսին:

Եվ, այնտեղից դուրս գալով և հյուսիսի կողմով իջնելով, եկան Կորիթ կոչվող գյուղը: Կուռքերին փչրեցին, թունավոր օձերին սպանեցին սուրբ խաչի նշանով և դևերի աղբյուրը ցամաքեցրին, որտեղ և հետո սուրբ Գրիգորը երկու եկեղեցի շինեց և Կորիթում փայտեղեն սեղան պատրաստեց և իր գոտին ու գավազանը որպես նշան թողեց այնտեղ: Իսկ սուրբերը, Տոսը գավառ հասնելով, սուրբ նշանը թողնում են լեռան հարավային կողմից՝ Վանի դիմաց՝ վանքի շատ փոքր խուցեր շինելով. այնտեղ մնացին՝ սպառնացող հալածանքների կասկածի պատճառով: Եվ այնտեղ Վարագ լեռան վրա ամրացան, որովհետև լսեցին, թե որոնում են իրենց, ցանուցիր բնակվեցին լեռան խորշում՝ իրենց համար գետնափոր բնակարաններ շինելով: Այսպես սուրբ քահանաներից երկու հոգի ապրեցին նույն տեղում մինչև առ Քրիստոս իրենց կոչման և վախճանի օրը: Եվ նրանց [բնակության] տեղերը կոչվեցին Ուրբաթայրեր, քանզի ուրբաթից ուրբաթ սուրբ պատարագ էին մատուցում և արժանավորապես բաշխում Տիրոջ Մարմինը և Արյունը սուրբ կանանց:

Արդ, ո՞վ կարող է պատմել Տիրոջ զորությունների մասին՝ լսելի դարձնելու համար Նրա սքանչելիքները, Ով Իր ողորմությամբ գերազանց լույս ծագեցրեց մեզ համար ա-

ըևմուտքից մինչև Հայաստան երկրի արևելքը, մանավանդ՝ կանանց միջոցով, որոնցի՛ց աշխարհ մտան մեղքերը: Ով ամենակարող է, և անհնար ոչինչ չկա Նրա համար: Արդ, Արարատյան գավառի Վաղարշապատ քաղաքում երանելիների մահվան, չարչարանքների և նահատակության մասին կիմանաս Ագաթանգեղոսի պատմություններից: Որոնց միջոցով բարձունքներից անստվեր Արեգակը ծագեց մեզ համար՝ լուսավորելով մեզ աստվածագիտության լույսով, պայծառացնելով տոնասեր և աստվածասեր հավատացյալ ժողովուրդների սրտերը. որի համար էլ Քրիստոսին վայել է փառք և զորություն և իշխանություն հավիտյանս հավիտենից. ամեն:

ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄԵԻ ԵՎ ՆՐԱ ՎԿԱՅԱԿԻՑՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆԸ [ՆՎԻՐՎԱԾ] ՆԵՐԲՈՂՅԱՆ՝ ՀՐԱՇԱՁԱՐԴ ՀՈՐԻՆՎԱԾՆԵՐՈՎ

Նորահրաշ և գերապայծառ է տոնն այս, և հոգևոր ցնծության ավետիսն ընդհանուր առաձայնում է բոլոր հայաստանցիներիս՝ մշտահոս առաքինությամբ, լուսեղանգ ծաղիկներով պսակելով աստվածասեր անձանց, որոնք ցնծում են վկաների պատվով և զվարճանում նահատակների արյամբ:

Կուսական է տոնն այս և բոցեղեն զվարթուն երկնայինների կուսական դասակցությունների լուսավոր խմբերին հորդորում է տոնակից և զվարճակից լինել, իսկ ասքանազյան ազգին՝ այսօր տեսնել սա՝ Քրիստոսի փառքի փայլմամբ պսակվելով և հրճվելով:

Մարտիրոսական է տոնն այս և ճգնավորական հանդես և վկաների բոլոր պսակակապ թագազարդված դասերին, պայծառ և մեծ սուրբ առաքյալների և մարգարեների աստվածազգյաց խմբերով հանդերձ, հրավիրում է դեպի Նոր Սիոն՝ պարակից լինելու առագաստի մանկանց, երկնավոր հարսանյաց հոգևոր երգերը երգելու՝ ի փառս անմահ Փեսայի:

Այսօր ցնծություն է երկնի և երկրի և երկնավոր շնորհների մեծ ավետիքը. պայծառ լույսով շրջափայլելով Թորգոմի տան մեջ՝ հավատացյալների հոգում երկնի ցնծությունն է շարժում: Որովհետև կենդանի Լույսը, որ փայլատակում էր երկնքից Հռիփսիմյանների վրա, այստեղ բա-

ցափայլեց փայլակնաբորբ ճառագայթներով. [այն] ոչնչացնում է անեծքների փուշը և վկայական արյամբ նորոգում երկնայինը, այստեղ ծաղկեցնում բանավոր բույսերի արդարության բողբոջները, սաղմոսների անուշահոտություն բուրում. այստեղ հնչում է անմահ Թագավորի փառքը:

Այսօր ցնծությունն է երկնի, որովհետև աստվածազգայց հարսը երկրի վրա ընդունեց՝ պսակը վայելչապես դրած, լույսով և անմահությամբ զգեստավորված, և խաչազգայց օրիորդները, նրա հետ կուսական արյամբ ծիրանավորված, երկնագումար սերովբեների անցնող խմբի հետ մտան Սրբություն Սրբոցի լուսո առագաստը՝ փեսայացած Բանի մոտ՝ Նրա աջ կողմում կանգնելու որպես սուրբ դշխո՝ ոսկեհուռ պսակված: Եվ հրեշտակների զորքերը, վկաների ծաղկաձև վարդագույն արյան անույշ հոտի փափագն ունենալով, իջնում են. և հողեղենը հրեղենին է միանում, որը հավետ հրաշացնում է վկաների հանդեսը:

Այսօր գերահրաշ և լուսապայծառ փառքով ցնծում է Հայաստանյայց Եկեղեցին կուսականների տոնով, որով Երրորդության լույսն ընդունեց [իր մեջ], մերկացավ մեղքի հնությունից, հարսնազգայց արփիափայլ հրաշքներով, Թագը գլխին հրճվում է և պարծենում իր պսակիչ Քրիստոսով՝ վկաների հանդեսը տոնելով:

Այսօր հիշատակն է Քրիստոսի սուրբ և մաքուր, անարատ հարսի [Հռիփսիմեի մասին է խոսքս] և նրա հետ՝ զգաստության աղբյուր և հավատի մայր Գայանեի, և սրբության որդիները՝ իմաստուն կույսերը՝ մշտավառ լույսով ջահազգայց, ծագում են արևմուտքից՝ Երրորդության համապայծառ լույսը փայլեցնելով Հայաստան աշխարհում:

Եկե՛ք այսուհետ, Քրիստոսի նո՛ր ժողովուրդներ և սրբության անթառա՛մ ծաղիկներ, իմաստուն կույսերին այժմ բարեբանության պտուղներով հատուցենք ի պատիվ վկաների՝ այստեղ, որտեղ կուսություն և զգաստություն է պետք, կենսաբեր ողկույզ պտղաբերելով: Եկեք փութա՛նք անմահության խորհուրդների պտուղը քաղելու և աստվածազգայց հարության հոտը բուրելու և, այս վկաների կուսական տոնը մեծարելով, մեր աշխարհին բարի համբավը բերենք՝ ասելով.

«Ուրախացի՛ր և ցնծա՛, Հայաստա՛ն աշխարհ, նոր Իսրայել, երկիր ավետյաց և դրա՛խտ աստվածատունկ՝ զարդարված առաքյալներով և մարգարեներով և սրբերի լուսեղեն դասերով. վկաների արյամբ քո մեջ մոլորության բոցը մարեց, և, ճշմարտության ջահը վառված, բոցն է բորբոքվում, լույսը՝ անաղոտաբորբոք ճառագայթներով:

Ուրախացի՛ր և ցնծա՛ մարգարեական ավետիսներով, Սիո՛ն լեռ, հյուսիսային կո՛ղմ, մեծ Թագավորի քաղա՛ք. կուսական արյամբ քո մեջ մեղքի ջրհեղեղը ցածրացավ, և ավետարանական գետերն ահա, ձայն բարձրացնելով իրենց ընթացքի մեջ, տիեզերատարած և լուսասփյուռ հրահոսան վտակները հագեցնում են քո դրախտը բանական երկնային տունկերի՝ հարազվարճ և մշտափթիթ լուսեղեն կանաչությամբ ծաղկած պտղով ունենալով էական Լույսի ճանաչողությունը:

Զվարճացի՛ր և հրճվի՛ր, նո՛ր Սիոն, արթնացրո՛ւ որդիներիդ թմբուկներով և պարերով դեպի հարսանյաց երգերը և ընդառա՛ջ գնա երկնավոր հարսին. զի գալիս է ահա սուրբ հարսը Լիբանանից՝ վայելուչ լույսով զարդարված, մարմինը արեգակով պարուրած և լուսինը ոտքերին. և, Քրիստոսի փառքի ճառագայթարձակ փայլմամբ պսակված, խանդակաթ սիրով ձայնում է Նրան. «Կհամբուրես

ինձ համբույրներով Քո բերանի, զի Քո ետևից եկավ անձն իմ» [Երգ, Ա 1]: Ահա գալիս է կույս հարսը՝ հոգու թևերով սլանալով, փայլելով կուսության բազմապայծառ լույսով: Գալիս է հանդիպելու անմահ Փեսային՝ ասելով. «Թափված յուղ է Քո անունը, որի համար սիրեցին օրիորդները Քեզ» [Երգ, Ա 2]: Գալիս է՝ իր դիմաց ունենալով արդարության Արեգակին, և նրա շուրջը լուսաճաճանչ աստղերը ճառագայթելով՝ բազմագին լույսի կուտակումն արևմուտքից սփռում-տարածում են մինչև հյուսիսի կողմերը: Գալիս է իրավունքով և արդարությամբ խոսողը՝ իր շուրջը սպասավոր ունենալով երկնային զորքերին, հրանյութերի խմբերին. և խաչազգյաց օրիորդները հրճվում են նրա հետ՝ ասելով. «Ցնծանք և ուրախանանք քեզանով, զի քոնն է ճշմարտապես ուրախանալը, որովհետև քեզ սիրեց Ուղղությունը» [տե՛ս Երգ, Ա 3]: Գալիս, մտնում է ցնծությամբ արյան առագաստը՝ տեսնելով իր Տիրոջը ցնծությամբ նոր առագաստ եկած՝ Խաչի վրա զոհվելու. հրով և արյամբ հարսնանում է Նրա՛ն, Ով աստվածության հրի մեջ մաքրեց իրեն և, Իր արյամբ ծիրանաներկելով, խաչազգյաց լույսով պսակելով, հարսնացրեց Իրեն և անապական կուսությամբ ծնեց կենդանի հույսով. և Սուրբ Հոգին էր հովանավորում այդ աստվածային հարսանիքը: Այսպիսին է բազմերջանիկ և սուրբ կույս Հռիփսիմեն, և այս է նրա կուսության և փառքի սպասավորությունը:

Արդ, քանի որ ովքեր արքայական հարսանիքի և կամ հանդիսական մարտերի գովեստն են դրվատում, պաճուճաբանելով աշխարհն ու ազգը՝ դեպքերն են պանծացնում, իսկ մեր մեջ գովասանքի արժանացողը սուրբ հարսն է, հաղթող նահատակներն ու իմաստուն կույսերը, սրանց ո՛չ թե ստորին երևույթներն են պաճուճազարդ խոսքով արվեստախոսում, այլ երկնքից ի վերուստ Սուրբ Հոգին է

հիացումով գովում, որոնք երկնքով մեկ փայլատակում են արեգակի փայլով: Բայց քանզի այս Սուրբ Հոգով պսակված հարսը, որպես իմ հոգու մայր, անապական կուսությամբ ծնունդ տալով ինձ և գգվելով սրբության գրկում, կուսական արյամբ աստվածագիտության կաթն արբեցնելով, հաղորդակից դարձրեց կենաց Բանին, և ծնունդից ի վեր մայրերի մոտ առանց ուսման բնավորված այն բնավորական գութը ստիպում է իմ դեռաբույս անձին սուրբ մորս և կույսի աստվածավայելուչ փառքը ներբողել՝ նրա հոգևոր ծնունդների հարախմբերի մեջ, այդ պատճառով էլ շատից քիչը սկսեցի՝ առաջնորդ ունենալով կենաց Բանը:

Սա, ինչպես հայտնի է բոլորին, հռոմեացիների գերապայծառ նահանգից էր. կայսեր ծիրանափառ օգոստականներից բուսեց որպես երկնային ծաղիկ Պողոսի և Պետրոսի հեղած առաքելական արյամբ ոռոգված անդաստանում, ծիրանագեստ մաքրությամբ փթթելով սրբուհի Գայանեի կուսական գրկում, նրանց վկայարանում սուրբ սեղանին մերձ սնվելով՝ զարգանում էր՝ հասնելու համար առաքելական հավատքի վկայության հասակին: Նրանց իսկ փեսավերների կողմից հոր աստվածազգյաց համաձայնությամբ Բանին է ընծայվում. հրճվելով առաքելական զարդով, իրեն զգաստության կենդանությամբ պատած, պճնված բազմալույս առաքինությամբ, պսակված Երրորդության համապայծառ լույսով՝ հոգով նմանվում էր Ստեղծիչի պատկերին, անապական և անեղծ կուսությամբ առագաստված՝ սպասում էր Քրիստոսին՝ երկնքի Արքային: Ոչ միայն հոգու մաքրությամբ, կուսության բազմապայծառ ճառագայթներով էր փայլում, այլ, ամեն տեսակ ոսկուց ավելի սրբված և մաքրագույն լինելով, որպես արդարև ճշմարիտ լույսի հայելի, մարմնի գեղեցիկ ստեղծվածով արեգակնապես փայլում էր ավելի, քան կանանց

ծնունդները: Մեզ հետ նաև Սուրբ Հոգին կերգի այս մասին. «Թագավորի դստեր ողջ փառքն ի ներքուստ է» [Սաղմ., ԽԴ 14]: Հարազատ գեղեցկություն չտեմարանած Քրիստոսի հարս, կենդանի լույսի պատկեր, անկողոպտելի նվեր, Աստուծո ընծայած անկոխ անդաստան, անմահության խորհրդի բուրաստան, անթառամելի կենաց ծաղիկ, հոգու սեղան, Աստուծո խնկանոց, բազմափայլ լույսի աշտանակ, կնքված աղբյուր՝ ըստ սողոմոնյան Երգի՝ պահված միայն սերովբեների Արքայի համար, Երկրորդ Ադամի՝ հրեղեն դասերով շրջափակված բանավոր դրախտ:

Այս դրախտը նախաշար օձն էր ջանում մտնել, ինչպես սկզբում՝ հակառակ առաջին ստեղծվածին: Իր լրբենի չարություններով աստվածազգյաց փառքից ջանում էր կողոպտել Բանին հարսնացած բազմերջանիկ կույսին՝ ինչպես դավաճանող կնոջը, այդ չհագեցողը չարիքից, որը և, հրեշտակների խմբի մեջ մտնելով, Հոբին էր ցանկանում [կործանել] և, Տիրոջը տեսնելով հանցավոր մարդու կերպարանքով, մարդկության վրա ընթանալով, փորձության էր ենթարկում՝ անգիտանալով, որ կործանվելու է Աստվածությամբ: Սա, Արարիչի պատկերի կերպարանքն ընդունածին՝ Բարձրյալի զորությամբ հովանավորված կույսին տեսնելով հանցավոր կնոջ կերպարանքով, փորձում էր թույներով մահու տալ նրան: Գեղեցկապատիր պտղի փոխարեն ոսկեկուռ ծիրանազարդ կայսերական պատվով շքեղացած՝ հռոմեացիների զորքը մոլեկան տափանքով այրվում էր նրան հարսնացնելու տենչանքից, որպեսզի դրանով երանության դրախտից հանի Պողոսի կողմից միջնորդված Քրիստոսի հարսին՝ սուրբ կույսին և մաքուր աղավնուն, որը վարձ էր ստացել դրախտի վայելչությունը, արքայությունն անանց, ուրախությունն անվախճան, լույսի որդեգրության առագաստը, լույսի խորանները և հրանյութերի խմբերի ցնծության պարը և, աստվածայինի սիրով վառված, տենչում էր արդարությամբ երևալ Աստուծո փառքին, վայելչության պսակ լինել Տիրոջ և արքայության թագ՝ Աստուծո ձեռքին: Զարը նրա՛ն էր հանդգնում փորձել՝ չգիտակցելով, թե նրանով լուծարվելու էր իր գոռոզացած իշխանությունը՝ օձի նզովքներով հանդերձ. և նրա կուսության լույսի որդիները ոտնակոխ անելով փշրում են նրա չարության գլուխը՝ անխայթելի գարշապարներով երանության ճանապարհով ընթանալու համար՝ որպես դեպի լույս հրավիրվածներ և փառավորվածներ, ուստի [չարը] վերստին կործանվեց:

Արդ, չարին՝ այսքանը. իսկ կույսին ի՞նչ. խանդաղատական ձայն էր արձակում փեսավերներին, թե՝ «Ո՞վ կարող է մեզ բաժանել Քո սիրուց» [Հռոմ., Ը 35], և թե՝ «Ահա մենք թողեցինք ամեն ինչ և եկանք Քո ետևից» [Մարկ., Ժ 28], և թե՝ «Աստուծով ապրենք և Քրիստոսի հետ խաչվենք», և թե՝ «Նրա հովանու տակ փափագելով կնստենք [տե՛ս Երգ, Բ 3], և Քո աջը թող ընդունի մեզ հանուն կենարար Փրկչի», որովհետև ասաց. «Վե՛ր կացեք, գնա՛նք այստեղից» [Մատթ., ԻԶ 46]: Զվարթուն սուրբ հողեղեն սերովբեն, այս ձայնից զարթնելով իմաստուն կույսերի դասերի հետ, զգաստ և մաքուր կուսության հոգևոր թևերով սլանալով, համանման այն թեթև ամպին, որին նստած Տերը Եգիպտոս էր մտնում, երկրի ծագերից բարձրանում էր այնտեղ հաստատված և երկնքով շրջափակված լեռների գլուխը. լեռներ, ուր Աստված է բնակվում, որոնք, մարգարեության համաձայն, ցնծում են Տիրոջ առաջ՝ Պողոսն ու Պետրոսը, որոնց գրկից գտնվեց այս լուսավորը:

Որոտատեսիլ ամպը Սուրբ Հոգու անձրևն է հոսեցնում և հյուսիսի կողմից՝ ցողելով Այրարատ աշխարհը՝ երկնավոր մշակներ Թադեոս և Բարդուղիմեոս սուրբ առաքյալ-

ների անդաստանը՝ զվարթացնելու նրանց քարոզության բազմածաղիկ բույսը:

Անստվեր լույսի առավոտը, բազմաստեղ լույսով ծագելով, հասավ հոգևոր աստղերի լամպարաջահ դասերին՝ ավետարանելու համար արդարության Արեգակի ծագումը բազմափայլ ճառագայթարձակ լույսով. երեք անգամ հինգ տարով երկրի ծոցում գիշերեց, որ ելնի և մշտնջենավոր ցերեկ տարածի այս աշխարհում: Բազմալույս ճառագայթը պարունակվեց, ամփոփվեց նոր աշխարհիս հնձաններում՝ կենաց Որթից մեզ համար պայծառ և կանխահաս ողկույզը պտղաբերելով, կուսության բաժակով արբեցնելու համար մեզ այն խաղողի արյունը, որը Խաչի հնձանում քամվեց և տիեզերքին անմահությամբ արբեցրեց:

Խռովվեց այն գոռոզ պագչոտյալը՝ չարի արբանյակը, Հերովդեսի նմանակը, երբ տեսավ, որ խաբվել է կույսից և, սաստիկ ցասմամբ գոռալով, իր տիեզերակալ իշխանությունն էր շարժում. և կատաղի ցասմամբ իր դառնությունը թափում էր Եկեղեցու հիմքերին՝ քանդելու, կործանելու և սրբերի արյամբ աշխարհն արբեցնելու: Արևմուտքի այդ չարը լուր էր ուղարկում արևելք. պարթևազգիների տերությունն էր շարժում, որ որոնեն չքնաղ մարգարիտին՝ իրենց տերության հնձաններում թաքնված գանձին: Սողում, շրջում էր աշխարհում օձը սկզբնաչար, մահաշունչ թույնով էր լցնում թագավորներին և նրանց զորքերին. պտտվում, թափառում էր երկնքի տակ. չարանում էր վկաների մարտից՝ տեսնելով իր կողմից խաբված ազնվականների զորաժողով գումարելը: Երկնչում էր՝ տեսնելով իր հաղթահարվելը սուրբ Կույս Մարիամից և որ նրա դուստր Հռիփսիմեով զրկվելու է բոլորի վրա ունեցած տիեզերապետությունից:

Այսպես ճշմարտության ճառագայթն էր փայլում Հայաստան աշխարհում, և ավետյաց ձայնն էր հնչում Թորգոմի տանը. քանզի շփոթված Պարթևաց տերությունը խռովվում էր՝ մեծահույզ քննությամբ որոնելու ելած բազմալույս անհայտ մարգարիտին, որ եկել էր՝ նրանց անանց մեծությամբ մեծացնելու: Եվ հոյակապ հաղթությամբ, քաջությամբ պսակվածը՝ քաջ այրերի հսկայազոր արքա սեգ Տրդատը, մոլեգնոտ տոփանքով տենչում էր իրեն սեփականացնել էական Լույսին հարսնացած Հռիփսիմե դշխոյին՝ նրան, ով պատշաճ էր իր Փեսային: Եվ պարթև զորքերը հարսանյաց փողերով ու սրինգներով շտապում էին արքայական պարով համոզել նրան, ով եկել էր՝ նրանց գրելու երկնքի Արքայի զորության զորքերի մեջ, սաղմոսների օրհնության երգով մոտեցնելու նրանց անմարմինների խմբերին: Եվ թագավորազուն օրիորդները և հայկազյաններիս կույսերը ոսկեկուռ, շքեղաշուք, երփներփն զարդերով, թմբուկներով և պարերով գալիս էին, որ արքունի սենյակը տանեն նրան, ով եկել էր նրանց հարսնազգեստելու Երրորդության լույսով, վերին Սիոնի դուստրերի կարգին դասելու լուսերամների դասի հետ, առագաստելու անեղաշեն հարսնարանին:

Եվ նրանք՝ սա, իսկ վկանե՞րն՝ ինչ: Զգաստության և սրբության մայրը՝ առաքելուհի Գայանեն, որ աղբյուրն էր հոգևոր շնորհների, որ կուսական ակներով մարգարիտ պսակ էր հյուսում սերովբեների Արքային, բացելով իր վկայական բերանը, քաղցրաձայն վարդապետությամբ հորդորում էր իր [հոգևոր] զավակին և օրիորդներին՝ Քրիստոսի մշտալույս հարսի հետ փութալ դեպի նշանակված նպատակը՝ դեպի քրիստոսադիր պսակահամբար կետը: Մեղր էր կաթեցնում իր շուրթերից Քրիստոսի քույրն ու հարսը՝ Գայանեն. մեղր ու կաթ էր իր լեզվով կաթեց-

նում սուրբ կույս Հռիփսիմեի լսելիքի մեջ՝ հիշեցնելով նրան քաղցր սնունդը, հայրենյաց ծիրանազարդ փառքի լքելը, Քրիստոսին հարսնանալը, Նրա մարմնավորումը հանուն մեզ, Խաչի վրա զենվելը, Նրա մյուսանգամ Գալուստը, ահեղ Ատյանը, անապական պարգևները: Կուսության հանդեսի աշխարհաժողով մարտում այսպիսի ավետարանական վարժություններով էր մարզում մեծ նահատակին ընդդեմ խրոխտ ախոյանի՝ նրան առաքյալների և մարգարեների և նրանց միջոցով էլ՝ Քրիստոսի դուստր կոչելով: Եվ նա՝ սա:

Իսկ նահատակը նահատակադիրի մոտ, աչքերը դեպի վեր՝ դեպի դերաշխարհիկ կայանները բարձրացնելով, Նրան էր օգնության կանչում. Ո՞ւմ՝ իր Տիրոջը և Աստծուն, անմահ Փեսային, Ով փրկեց Շուշանին և ապրեցրեց Թեկղին և հնոցի մեջ ցող ցանեց [տե՛ս Դան., Գ]. Նրա թևերի տակ էր տենչում հովանի գտնել, ազատվել անարժաններից: Լսեց կույսի աղոթքները Թագավորը, Ում ցանկալի էր նրա գեղեցկությունը, և երկնքի ահավոր զորությամբ Իրեն ցույց տվեց նրան, ահեղ որոտմամբ ցրեց լկտիների ահաբեկված զորքը: Բացում էր հաստատությունը. անունով էր կանչում Իր հարսին՝ Իր անճառելի փառքը ցույց տալով նրան, ա՛յն լուսո խորանը, ուր հրավիրվեց, նրա համար պատրաստված բազմապայծառ պսակը և հրեղենների խմբերը, որոնք սպասում են երկնքի դռների մոտ՝ նրան առագաստի մեջ ընդունելու համար. խոստանում էր նրա հետ լինել հավիտյան և նրանով այս աշխարհը հաշտեցնել Իր հետ և ավետարանական լույսով՝ ոլորտները հյուսիսի:

Փեսայի ձայնից զորացավ կույսը, հրապարակ ելավ ախոյանի դեմ, որը մարմնի և մեղքի գրգիռներով փոթորկվող խավարի մեջ էր: Ելնում էր մեղքերի դեմ մարտի ճակատ՝ սպանելով մեղքը և այն գտնողին: Արդարությամբ վառված իր Հոր՝ երկնավոր նահատակի զենքերով ու զարդերով, որ նրանով առաքելական ըմբշամարտիկ դարձավ՝ սպառազինվելով հավատի զրահներով, որպես հուսո սաղավարտ դնելով Նրա հավատի վահանը, Նրա պես մեջքին սրբությամբ կամար կապած, ունենալով հոգու սուսերը՝ կուսական փողով Նրա ձայնն էր հնչեցնում ընդդեմ մեղաց մարտի, թե՝ «Ո՞վ կարող է հեռացնել ինձ Քրիստոսի սիրուց՝ սո՞ւրը, հո՞ւրը, խա՞չը, մարմնիս հոշոտո՞ւմը, ոսկորներիս կոտորո՞ւմը. այլև նույնիսկ հանդերձյալ հավիտյանները չեն կարող զատել ինձ Նրա նկատմամբ կենդանի սիրուց, Ում ես հարսնացա» [տե՛ս Հռոմ., Ը 35-39]: Կույսը հարդարում էր [կռվի] ճակատը, երբ, դահիճների կողմից ձգված, բռնությամբ փակված էր արքունի սենյակում՝ կուսության ասպարեզում: Դարձյալ վեր էր բարձրացնում աչքերը, դարձյալ՝ կուսական մաղթանքներ, դարձյալ՝ փարելի պաղատանքներ, դարձյալ՝ խանդաղատական արտասուք և աղերսալի աղոթքներ: Ո՞ւմ ուղղված. Նրա՛ն, որ ծովը ճեղքեց և սանձեց Հորդանանը, մարգարեին կորզեց կետի [որովայնից] և մահը կողոպտեց և գոռոզացած քաղդեացուն ճարակավորների խմբի մեջ արտաքսեց: Այդ զորությանն էր աղաչում կույսը հովանի լինել իրեն՝ ասելով. «Արթնացրո՛ւ Քո զորությունները և արի՛ մեզ ապրեցրու. Քո գթությունները դեպի ինձ կգան, և կապրեմ ես, որովհետև Քոնն եմ ես. ուստի ապրեցրո՛ւ ինձ» [տե՛ս Սաղմ., ՀԹ 3]:

Գալիս հասնում էր մոլեգնած ընդդիմամարտը՝ կատաղի զայրացմամբ ցնորված, բորբոքված մեղքերի բոցով: Ուզում էր այրել անթառամ կուսության բոցատերև վարդը, որ կենաց ցողով էր փթթում՝ հոգու զորությունը հագած: Կույսն էլ էր հանդես մտնում: Նոր էր հանդեսն այդ՝

հրեշտակների և մարդկանց մտքից ու խոսքից վեր: Հանդես էր մտնում խաչազգյաց կույսը ծիրանագգեստ արքայի առաջ, որ հարսանյաց թագ ու զարդերով էր պճնված: Հանդես էր մտնում կույսը, որ խաչով էր պսակված և խաչված՝ աշխարհում, նրա առաջ, ով թագով խրոխտացած գլուխն էր բարձրացնում և որպես փեսա սրտաշարժությամբ ցնծում առագաստում: Կույսը դեմ էր դուրս գալիս հսկային, որ, զորությամբ փքված, տիեզերքն էր դղրդացնում և գոռալով խրոխտանում, թե կջնջի մարաց և պարսից զորությունը: Ճակատելու էր ելնում զգաստությամբ զինված կույսը պագչոտած ահեղ վայրագի դեմ, որն, ըստ առակավոր խոսքի, սիգալիս ավերում էր գետաթմբերը և ցամաքեցնում ծովերի հորձանքները: Բռնավորը, հանդեսների զորությամբ պերճացած, նա, ով պարսից դեմ կռվելիս ցրում էր փղերի երամակները, հունաց ըմբշամարտի հանդեսներին ցուլերի եղջյուրներն էր ձեռքով պոկում և ափերով հսկային էր պատառոտում, դեմ էր դուրս գալիս կույսին, որն ուսին խաչ ուներ դրած և տենչում էր ծարաված սիրով խաչակից լինել կուսածին Արարչին:

Արդարև, նոր էր հանդեսը. հրեշտակների զորքերը, նրանց հետ հանդեսով սքանչացած, կուսածին Արքայի փառքն էին հիացած երգում: Սաստկանում էր հանդեսն ընդդիմամարտների, մոտենում էր պսակների [դնելու] պահը. քանզի հաղթում էր կույսը, հաղթվում էր արքան, վանում էր կինը, վանվում էր հսկան. մանուկ կույսը զգետնում էր տիեզերասաստ բռնավորին. թագը փշրված էր, արքայական արդուզարդը՝ կողոպտված, կույսի անկողոպտելի մաքրության զգեստն անապական էր մնացել. կույսի ոտքերի տակ գետնատարած ընկել էր մահաշունչ վիշապը, որը կույսի արյամբ էր կենդանակերպվելու երանության պատկերով: Քանզի կույսին հովանի էր այն բազուկը, որ Խաչի վրա բարձրացավ, որ ձգեց երկինքը և երկիրը հաստատեց, սանձեց ծովը և ամեն ինչ Իր ձեռքում ունի: Նա Իր աջով ետ էր պահում անհպելի կույսին՝ Իր կողմը ձգելով և ձախով դեպի նպատակն էր ուղղում նրան [տե՛ս Երգ Ը 3]: Եվ քանզի գիշերվա ժամին էր կատարվում հանդեսը, նաև անաստվածության խավարի մութն էր պատում նրանց, ովքեր այնտեղ էին. սակայն որպես փայլակ արեգակնապես ցոլանում էր արքունական սենյակից, անթաց ոտքով պատռելով մեղքերի ծովը, Լիբանանի գեղեցկուհին՝ Քրիստոսի հարս անվանվածը, մաքուր այդ աղավնին՝ ձիթենու տերևը բերանում՝ հոգու ավետիս տալու Նրան, Ով անդունդի խորքերն իջավ, ինչպես Նոյը՝ ծոցը տապանի, տասնհինգ տարի տքնելով՝ մեծ ավետիքին էր սպասում մեր աշխարհի հայրը, հոգևոր լույսի ճառագայթը, Միածնի քարոզը, մեծ լուսավորիչը. հոգու թևերով թռած լուսազգյաց աղավնին ավետիսի քաղցրաբարբառ հնչումն առձայնում էր հնձանում, որտեղ տրտմազգեստ նստում էին զգաստների խմբերը:

«Զվարճացի՛ր,— ասում է,— ուրա՛խ եղիր, Գայանե՛, մա՛յր լույսի որդիների. ուրա՛խ եղիր և ցնծա՛ մարգարեական օրհնությամբ, անապա՛տ ծարավի. ահա՛ ծաղկեցիր որպես շուշան և քո գրկում բուսած իմ կուսության անթառամ վարդը փթթեցրիր ի փառս և ի զարդ Հայաստան աշխարհիս: Արդ, մա՛յր իմ, ուղարկի՛ր ինձ այն առագաստը, ուր հրավիրվեցի: Փութա՛, շտապում եմ ես, քանզի «Եղբորորդին իմ անցավ, և իմ ոգին դուրս եկավ Նրա խոսքի հետ» [Երգ, Ե 6]: Գնում եմ փնտրելու Նրան, Ով սիրում է իմ անձը. որտե՞ղ է հովվում, որտե՞ղ է հանգստանում. շուշանների մեջ, բուրաստաններում, վայրի խոտերի մեջ՝ խաղաղ ջրերի մոտ, քանզի Նրա թևերի հովանու տակ ես հանգիստ առա՝ անստվեր լույսի մեջ: Ե՛լ, տե՛ս նահա-

տակ կույսիս. հանդեսն ավարտեցի, ախոյանին հաղթեցի, պատերազմը ետ մղեցի. մարտի տապից պապակած՝ ծարավում եմ. տենչում եմ հոգևոր կենաց Աղբյուրին մերձենալ, Ով խաչի վրա՝ Գողգոթայում, ինձ համար ծարավել էր. ձայնում է ինձ, որ խաչակցեմ Իրեն: Ե՛կ, տե՛ս ինձ՝ իմ մաքուր կուսությամբ խաչի վրա Նրան փարած, իմ արյունաներկ շրթունքներով, աստվածային ըմպելիքի աղբյուրն ինձ մոտեցնելով, որին Նա ծարավեց, ջրի աղբյուր հանեց՝ կողից բխեցնելով, որից ինձ ծնեց հարսը, որը և ես ըմպելով՝ կդառնամ կենդանի ջրի աղբյուր, որ հոսում է դեպի հավիտենական կյանք:

Եվ ձե՛զ ավետիք, Սիոնի երկնամի՛ լուսերամներ և իմաստո՛ւն կույսեր, ելե՛ք և տեսե՛ք ձեր դշխոյին՝ Հռիփսիմեին, այն պսակով, որով պսակեց նրան իր Տերը նրա հարսնության օրը [Տե՛ս Երգ, Գ 11]. փութացե՛ք և ելե՛ք. ես ձայն եմ տալիս. «Եղբորորդին իմ խնկի պարտեզ իջավ՝ զմուռս քաղելու» [Տե՛ս Երգ, Զ 1]: Գնում եմ նրա հետ դեպի զմուռսի լեռը՝ Նրա մահվան վայրը, որովհետև ձեր ամպերով Նրա հետ ելա դեպի կնդրուկի բլուրը՝ Աստվածության լույսի վայրը [տե՛ս Երգ, Դ 6]: Թողե՛ք ձեր հնձանները, սլացե՛ք հոգու թևերով, մաքո՛ւր աղավնիներ և իմ հարսանիքի՛ օրիորդներ. իմ հարսնության վարդագույն զարդարանքով զարդարվեցի: Ընդառա՛ջ ելեք իմ արյունաներկ, կամարազգեստ Փեսային, որպեսզի դուք էլ ինձ հետ փայլեք Նրա արքունական ծիրանիներով՝ ի փառս և ի զարդ հրեշտակների և մարդկանց:

Ավետյաց ձա՛յն հնչեցրեք արևմուտքում, փո՛ղ հարեք Հռոմում: Զվարճացի՛ր և ուրա՛խ եղիր, տիեզերակա՛ն մայրաքաղաք, որ նստած ես արևմուտքում՝ առաքելաջահ լույսով պսակված, աշխարհատարած ճառագայթներով. քո ծիրանազգեստ դուստրերը ճառագայթելով փայլում են արևելքում, երբ հանդիպում են Նրան, որ արևելքից է ծագում, լինելով նոր Սիոնի դուստրեր և օրիորդներ և պարողներ լուսո հարսանիքի: Ուրա՛խ եղիր և ցնծա՛, հռոմեացվոց Եկեղեցի, Հռիփսիմեի մա՛յր և հա՛րս անմահ Փեսայի, հա՛րս առաքելական, որ Ավետարանի թևերը քեզնից սլացան դեպի արևելք: Այսօր խաչված Տիրոջ հետ առագաստ է մտնում՝ բաժակի արյամբ ծիրանազգեստված և պսակված, անապական կուսությամբ ծնելով լուսո Հոր արևելքի որդիներին:

Եվ ձե՛զ ավետիք, Քրիստոսի՛ առաքյալներ և ի՛մ փեսավերներ. ահա՛ առագաստ եմ գնում ես՝ ձեր կողմից հրավիրված: Ուրա՛խ եղեք, զի սիրեցի Տիրոջը, ինչպես որ ձեր կողմից պատվիրվեց. ձեր բարիքներով մարտ մղեցի, հավատը պահեցի, ընթացքը կատարեցի, խաչվեցի աշխարհում, մերկացա հին մարդուց, երկրավոր անդամները մեռցրի, սպանեցի ախտերը, դատապարտեցի մեղքը, հանգցրի նրա ցանկության բոցը, հաղթեցի հեշտություններին, խայտառակեցի օձին, չեզոքացրի նրա թույները, ընդոտնեցի մահը և, իմ խաչն առած, գնում եմ խաչվածի հետ դեպի Նրա չարչարանքների առագաստը: Եկե՛ք, ցնծացե՛ք իմ նոր հարսանիքին. իմ Փեսայի վարդագույն արյունը և [Աստվածության] հուրը հեղված են որպես զարդ՝ խաչի վրա. Նրա հետ եմ թագ առնում, Ում ինձ հարս տվեցիք:

Երկնավոր ավետյաց ձայն հնչեց քո մեջ, Հայաստա՛ն աշխարհ՝ հանդեսի ասպարե՛զ և իմ արյան հոսանքների առագա՛ստ: Ուրախացի՛ր և ցնծա՛, զի մեծացրեց Տերը՝ քեզ մոտ ուղարկելով. ահա ցող եմ ցողում քեզ վրա՝ քաղցրության ցող՝ իմ արյան կուսական շիթերը՝ դալարեցնելու համար քո վայրերը աստվածագիտությամբ, շուշանազարդելով քո հովիտները մարգարեների ծաղիկներով՝ քո մեջ

առաքելական բուրաստանը փթթեցնելու համար, մշակելու քեզ որպես իմ Փեսայի դրախտը. որպեսզի «իջնի իմ եղբորորդին Իր պարտեզը և ուտի իր ծառերի պտուղները» [տե՛ս Երգ, Ե 1]: Բերկրի՛ր, Այրարա՛տ, աստվածապարգև ավետիսներովս. ահա՛ բարձրանում եմ քո Գողգոթան՝ Արարչի չարչարանքների բաժակն ըմպելու իմ կուսության բաժակով, քեզ՝ ծարավիդ արբեցնելու կենարար արյան բաժակը՝ անմահության և լույսի:

Եվ քե՛զ ավետիք, երկնավո՛ր նահատակ և փրկությա՛ն քարոզ, բազմափայլ ճառագայթ, որ փակված ես գբի մեջ. ահա՛ քեզ օգնության եմ հասնում՝ արևմուտքից արևելք սլանալով իմ կուսության թեթևընթաց ամպով. եկա՝ իմ հայրերի՝ Պետրոսի և Պողոսի Ավետարանի տիեզերածավալ լույսի փայլակնաբորբոք ճառագայթը ծագեցնելու քո վայրերում, վանելու, փարատելու խավարի մեգը, որ արգելելով փակել է քո՝ կենդանի լույսիդ ճառագայթը: Ծագի՛ր, մե՛ծ լուսավոր, խոր անդունդներից քաղցրանվագ քո լույսով՝ քո սուրբ հայրերի՝ Թադեոսի և Բարդուղիմեոսի Աւետարանի լույսով փթթեցնելու հյուսիսի աշխարհարձակ ճառագայթալույս փայլումը: Քո վրանը խփի՛ր արևի դիմաց [տե՛ս Սաղմ., ԺԸ 6] և ելի՛ր, արդարության Արեգակ, ցնծությամբ ողջույնի ընթանալու արյունազգեստ հարսին, որը, մարտիրոսական արյամբ ճգնելով, եկել է քո խորանի՝ անմահ Փեսայի հարսնարանը: Ե՛կ, հանդիպեցրո՛ւ թաքնված ողորմությունդ իմ ճշմարտությանը. քանզի իմ և քո խաղաղությունը մեր հայրերի համբույրով ողջույն և խաղաղություն է լցնում այս աշխարհում: Ահա բացեցի երկինքը, Սուրբ Հոգու որոտումը հնչեցրի քո դաշտում՝ քաղցրության ցող ցողելու հովիտներում, արյամբ ոռոգելու և զվարթացնելու քո բույսերի արդյունք արդարության ցողը, վաստակա՛ծ երկրագործ: Ահա խլեցի

քո անդաստանից անեծքի փուշը, մեղքի տատասկն իմ կուսական հանդեսով: Ե՛լ, սերմանի՛ր, քա՛ջ սերմնացան, Լույսի ավետարանի սերմերը, որպեսզի հնձի հասնելու ժամանակ ցնծանք միասին: Ահա իմ՝ քո արյանը խառնված վտակները հանգցնում են խավարի բոցը, վառելով բորբոքում աստվածային Լույսի հուրը՝ սրբելու քո արյամբ ներկված անդաստանները: Ե՛լ, տնկի՛ր, քրտնաթո՛ր մշակ, կենաց որթը, ծաղկած ողկույզը՝ Հոր կողմից մշակված խաղողի արյունը՝ քո սուրբ աջով վկայված. հուրախություն վերինների և ներքինների պատվի՛ր իմ հարսանյաց տաճարում: Ահա ճմլվում եմ քո հնձաններում. իմ կուսության բաժակով, անմահության հոսանքներով արբեցրո՛ւ քո ծարված ժողովրդին, հրով և սրով կոտորվածներիս՝ մեր վարդապետության ծաղիկներին. և քո նոր ժողովրդին բոլորյալ պսա՛կ հավաքիր, որպեսզի սրանով մտնեն մեզ մոտ՝ լուսո հարկերը:

Ցնծա՛ և ուրախացիր և դո՛ւ՝ վերի՛ն Սիոն, կենդանյա՛ց քաղաք և իմ սրբությա՛ն առագաստ, դո՛ւ՝ ազատդ և մայրը հայր Պողոսի և Լույսի բոլոր որդիների: Բա՛ց քո դռները և ընդունի՛ր Բանի մոտ հրավիրված, Նրա ծիրանին հագած և Նրա Խաչով պսակված հարսին. գալիս, առագաստ է մտնում, և կույսերը՝ նրա հետ: Բարձրացրո՛ւ քո աչքերը, Սիո՛ն, և տե՛ս ամպի նման սավառնող, արյան գույնով պճնված քո դուստրերին՝ Հռիփսիմեի՝ Թագավորի դստեր հետ, որին Բանը կանչում է դեպի սենյակը Թագավորի: Եվ Դո՛ւք՝ հրեշտակների՛ զորքեր, որ հանդիսակիցն եք իմ կուսության մարտի ցնծությանը, ելե՛ք՝ ժողովելու հոգնած հոգիներին, որ հրո և արյան մարտի մեջ են սպասում, [քանզի] շտապում ենք հասնել կենդանի Աղբյուրին:

Ցնծության ավետի՛ք քեզ, Լուսո Մայր Մարիա՛մ, աղբի՛ւր մաքրության. քո լույսով ես մերկացա անեծքից՝ ինձ

վրա գցելով քո սրբության լույսի ճառագայթը. գալիս եմ հարսնանալու քո Որդուն և Նրա արյան վարդագույնն ունեմ որպես պսակ: Ցնծությամբ ընդունի՛ր ինձ՝ քո լուսո հարկում հանգստանալու համար, որովհետև հրո և արյան մարտով հանգցրի մեղքի բոցը և, իմ կուսության վարդն անթառամ պահելով, ծաղկեցրի տիեզերքն իմ արյան ցողով՝ տենչմամբ փափագելով քեզ ի ողջույն, Լուսո՛ Մայր: Մտցրո՛ւ առագաստ՝ Սրբություն Սրբոցը, Թագավորի մոտ, Որն իմ գեղեցկության ցանկությունն ունեցավ, որպեսզի ես էլ հագենամ Նրա լույսի փառքից»:

Այս խոսքը, կույսից միաձայն հնչելով, երկնավոր ցնծությամբ մաքրեց օդերը, երկիրը երկինք երևացրեց, դրախտը բացեց, նրա ծաղիկների անմահության հոտը բուրեց երկրում. երկնակամարը պատռեց և հողեղեններին մոտեցրեց հրաբուն դասերին:

Լսեց կույսի ավետիսը կուսածին լույսից վանված խավարասեր վիշապը մահաշունչ և տագնապեց. քանզի այն զենքով, որով մահու թույնը սկզբում առաջին կույսի բնությանը խառնեց, նույն զենքով իրեն հերձված էր տեսնում և մեղքի թույնը՝ սպանված՝ վկայվելով այս կույսով, որ Մարիամի լույսի կերպարանքով էր նկարված. քանզի չարն իրեն լուծարված և պարտված տեսավ, շտապում էր հագեցնել իր ծարավը սրբերի արյամբ: Եվ ի՞նչ էր գործում. եբրայեցիների պես լկտիների մոլեգնած խմբերին՝ արյամբ կատաղած, զայրացմամբ մութ գիշերով սուսերներով և ջահերով մղում էր Քրիստոսի հարսի ետևից, որը դիմելով գնում էր դեպի ասպարեզ, դեպի մահ, ինչպես ոչխարը՝ մորթվելու, և դարձյալ կատարվում էր գրվածը. «Խռովեցին հեթանոսները, թագավորներն ու զորքերը հավաքվեցին միասին Տիրոջ և Նրա Օծյալի համար» [տե՛ս Սաղմ., Բ 1-2]:

Հարսը Աւետարանի հետ վկայելիս, իմանալով Փեսայի ծագումը, գիշերով զինավառում էր կույսերին: Բարձրանում էր կառափման վայրը՝ արյան ողջույն և սիրո համբույր տալու Նրան, Ում սիրեց և, մաքրության կույսի կերպարանքով սլանալով նախատեսված վայրը և նայելով Փեսայի ճառագայթին, խանդաղակաթ սիրով բաղձում էր Նրա լույսին միանալ: «Տե՛ր,– ասում է,– ընդունի՛ր ոգիս, որ սիրեց Քեզ և անձը դրեց Քեզ համար. արդարև սիրեցի Քեզ ողջ սրտով և Քո սիրով կենդանագրեցի իմ մեջ Քո անհպելի գեղեցկությունը. սիրո վայելչությամբ վառված՝ հրով այրեցի մեղքերը և օձի թույները սպանեցի, և իմ կուսության սրբության սիրո աղբյուրը կնքեցի, Քո արյան լույսի շիթերն ըմպեցի իմ արյան բաժակով. արբեցրու՛ ինձ կենարար աջովդ, որը, խաչի վրա տարածվելով, գրկեց ինձ, զի և ե՛ս ուրախությամբ լցված լինեմ»:

Այսպիսի խանդաղատական մաղթանքներով էր կույսն աղաչում Փեսային և, ընծայելով իրեն, խոնարհեցնում էր գլուխը դեպի պսակը. քանզի հասավ այնուհետև խավարազգայց վանիչը՝ իր հետ առած պարթևազն իշխաններին ու զորքին՝ հրաբորբոք ջահերով՝ խամրեցնելու, այրելու կուսության անթառամ վարդը, որ հրի լուսեղեն կանաչությամբ էր ծաղկել: Զգիտեր չարը, որ իր մոլորության բոցը նրա այրմամբ էր շիջանվելու, և պարթևները նրա արյան ցողով ծաղկելու էին Աստվածության գավիթներում. այլ մոլեգնած, ըստ իր բնական չարության, ինչպես մի ժամանակ խաչողներին էր փութացնում դեպի տերունական մահը՝ զինվորներին կատակներ էր հուշում՝ հանդերձներից մերկանալը, կարմիր քղամիդը, եղեգնը, փշե պսակը. չգիտակցելով՝ հակառակ իրեն էր դրանք հնարում. քանզի Տերը դրանցով մեզ փրկեց, իսկ նրան ընկճելով կործանում էր: Վասնզի կողոպտում էր՝ մեզանից վերցրած

մեղքի ծածկույթ հանդերձներից մերկանալով և նրան բռնազդեցիկ փառքից մերկացնելով. և արյունների շաղախման անօրեն անեծքները բարձրացրեց կարմիր քաղամիդի վրա՝ Իր Աստվածության ծիրանին հագցնելով մեզ: Նրան պարտավորելով՝ անմահ սպանման էր մատնում և պարտավորության հանցանքների գիրը ջնջեց եղեգնով՝ մեզ գրելով կենաց որդեգրության: Նրան դատապարտելով արտաքսում էր դեպի տարտարոսագեն խավարը. և փշերի անեծքը ջնջում էր պսակով՝ մեզ պսակելով Երրորդության լույսով: Նրան նզովքներով, որպես փուշ, տալիս էր այրվելու մշտնջենավառ հրի մեջ՝ ըստ գրվածի, թե՝ «Մեղավորներն այրվելու են փշերի պես» [տե՛ս Եսայի, ԼԳ 12]: Այսպես և սրբերին հակառակ էր գործում իր չարությամբ, քանզի նրա կողմից հրապուրված թագավորի իշխաններն ու զորքը դառը և անողորմ տանջանքների էին ենթարկում մարմինը. և սա մեզ համար կենաց առիթ էր լինում, իսկ չարի համար՝ մահվան: Քանզի Բանին միացած մաքուրը, կապված լինելով, մեզ ազատում էր բազմաստվածության կապանքներից՝ կապելով չարի իշխանությունը: Մերկացնում էր սրբությամբ առագաստյալ լուսազգյաց մարմինը և, մեզ զգեստավորելով Ավազանի լույսի սրբությամբ, մերկացնում էր չարի կարծեցյալ փառքը: Այրվում, տապակվում էր մարմինը հրաբորբոք կանթեղներից՝ կենդանախարուկվելով աստվածային լույսի հրով, և հրդեհվելով կիզում էր չարի մոլորությունը՝ մեր մեջ բորբոքելով հոգևոր հրի բոցը, որ գցեց երկիր: Սրով հերձվում էր մաքրազգյաց կուսական որովայնը. և, Սուրբ Հոգով հղանալով կենաց խոսքը, հոգևոր երկունքով մեզ ծնունդ տալով Լուսո Հոր որդեգրության մեջ, ջնջում էր օձի բազմածնունդ չարությունը: Հատում էր երկնավետյաց քարոզ լեզուն և լռեցնում կռապաշտության հնչմունքը՝ հոգևոր երգերի

օրհնությունների քաղցրությանը մեզ հորդորելով: Փորվելով հանգչում էին սուրբ վկայի՝ լույսով վայելչացած աչքերը, և մարելով խավարեցնում էր մոլորության կայծակը՝ ծագեցնելով մեզ Երրորդության ճառագայթները: Կոտորում, հոշում էր կենդանի մարմնի բովանդակ անդամները և սպանում էր մեղքի անդամները, որպեսզի մեզ դարձնի արդարության անդամներ՝ իրենով միացնելով գլուխ Քրիստոսին՝ Աստուծո աճմամբ աճելու:

Սա է Քրիստոսի սուրբ և անարատ հարսի հանդեսը, որը սպանեց մեղքերը և, իր արյամբ ջրելով օձի թույները, մեղքի ծառայությունից գնաց անդատապարտելի ազատության՝ դեպի Լուսո Հոր որդեգրությունը: Եվ նրա հետ եղած սրբության օրիորդները նույն այդ հանդեսով՝ արյամբ պսակված, մահը ոտնակոխ արած և օձի գլուխը փշրած, խաչազգյաց մշտավառ լույսով նրա ետևից ելան երկնի Արքայի լուսո առագաստը: Եվ կատարվեց գիրը, որն ասում է, թե՝ «Թագավորի մոտ են տարվելու կույսերը նրա ետևից, և նրա ընկերները տարվելու են Նրա մոտ» [Սաղմ., ԽԴ 15]: Իսկ մատնիչը ամաչելով հեռացավ. սրբերի դեմ չարությամբ [դավեր] էր նյութում և տագնապով շտապում դեպի հրավիրող խավարը:

Իսկ նա, ով Լույսի կողմից հրավիրվեց՝ աստվածազգյաց հարսը, ընկճելով չարի խոհերը, հանգցրեց մահու խայթոցը. և, էական Լույսի նկարագրին կենդանակերպվելով, վեր բարձրացավ որպես փայլակ, լուսավառ լամպարաջահ վարքով իմաստուն կույսերի հետ՝ ճառագայթելով վերին խորանում: Այնտեղ էր տեսնում ավետյաց երկիրը, կենդանյաց աշխարհը, սրբության լեռը, լուսո օթևանները, երկնային տունկերի ծաղկած բուրաստանները, անդրանիկների հավաքները, հրանյութերի խմբերին, լույսի մեջ թագավորածների հրապարակները, հրանյութերի հույլերը,

սերովբեների բանակները և, նայելով նրանց ծարավի սիրով, հարցնում էր. «Տեսե՞լ եք իմ հոգու Սիրելիին» [Երգ, Գ 3]:

Որից հիացան վերին զորքերը՝ տեսնելով Արարչի պատկերով կենդանակերպված հողին, որն, անցնելով իշխանությունների վրայով, խնդրում էր մտնել ներքին կողմը՝ անմերձենալի Լույսի մոտ: Ձայնելով գոչում էին վերիններն իրար. «Ո՞վ էր սա, որ ելնում է անապատից [Երգ, Գ 6], գալիս է սպիտակացած, հենված՝ իր Եղբորորդուն [Երգ, Ը 5], զարդարված է արյան գույնով. կարմիր վարդերից պսակ ունենալով՝ ձայնում էր՝ ասելով. «Թող համբուրի ինձ Իր բերանի համբույրներով» [Երգ, Ա 1]: Եվ կամ ովքեր են սրանք, որ սրա հետ, թռչող ամպերի և երամացած աղավնիների նման, դեպի մեզ են գալիս»:

Եվ լսում էին Տիրոջը, Որն ասում էր. «Սրանք հուսացել են Ինձ, և Ես կտանեմ նրանց դեպի Իմ սրբության լեռը և կուրախացնեմ Իմ փառքի խորանում»: Կանչում էր և հարսին. «Կգաս և կհանդչես Իմ թևերի հովանու ներքո, քո՛ւյր Իմ հարս, քանզի գեղեցիկ ես բոլորովին, և չկա որևէ արատ քեզ վրա [Երգ, Դ 7], դի՛ր ինձ իբրև կնիք քո սրտին և իբրև մատանի՝ քո բազկին» [Երգ, Ը 6]: Ձայնում էր և օրիորդներին. «Եկե՛ք Ինձ մոտ, վաստակածնե՛ր և հոգնածնե՛ր, կանա՛յք, որ դիմելով գալիս եք հանդեսից, և Ես կընդունեմ ձեզ [տե՛ս Մատթ., ԺԱ 28]. և կլինեք դուք իմ ուստերի և դուստրերի մեջ, և Ես ձեզ Աստված կլինեմ [տե՛ս Եզեկ., ԺԴ 11, ԼԷ 23]. որպեսզի ուրախությունն Իմ ձեր մեջ լինի, և ձեր ուրախությունը կատարյալ լինի» [Հովհ., ԺԵ 11]:

Ցնծության ձայնից լցվում էր վերին Սիոնը, զվարթունների և կույսերի միասին երամացած խմբերը հարսանյաց երգեր էին երգում՝ ուղղված Փեսային. «Ահա՛ դշխոն Քոաջ կողմում՝ զարդարված և պաճուճված ոսկեհուռ հանդերձներով», և հարսին. «Սա է քո Տերը, պիտի երկրպագես Սրան [տե՛ս Սաղմ., ԽԴ 12]. վասնզի, տեսնելով գեղեցկությունը քո, սիրեց քեզ. և կլինես դու վայելչության պսակ Տիրոջ ձեռքին և թագ արքայության՝ քո Աստուծո ձեռքին»:

Բացում էր այնուհետև առագաստը, մտնում էր Սրբություն Սրբոցը՝ փեսայացած Բանի մոտ: «Տարավ ինձ Արքան Իր սենյակը [Երգ, Ա 3], և հպվեցի անմերձենալի Լույսին և Նրան միավորված ճառագայթ [եղա],– ասում էր:– Ահա գտա իմ հոգու Սիրելիին, բռնեցի նրան և չեմ թողնելու [Երգ, Գ 4], այլ նստելու եմ Նրա հովանու ներքո [Երգ, Բ 3]» և բարձունքներից միացած Սրա դարձին՝ հագած Նրա զորությունը: Կույսը, բարձունքներից նայելով, ստորինների մեջ հովիտներն էր նկատում, ուր իր արյան վտակներն էին, որովհետև կռապաշտությունների քարացած սառնամանիքն անշարժ էր մնում քաջ պտուղների մոտ: Այդ պատճառով էլ հոգու իշխանությամբ հրամայում էր զորության ձայնով՝ ասելով. «Վե՛ր կաց, գնա՛, հյուսիսայի՛ն քամի, և ե՛կ, հարավայի՛ն քամի, փչիր իմ պարտեզի մեջ, և թող բուրեն իմ խունկերը» [Երգ, Դ 16]: Եվ հրամայածն անմիջապես կատարվում էր:

Քանզի խորքերից ծագեց արդարության արեգակը՝ սուրբ Լուսավորիչը. Աւետարանի լույսի ջերմ ճառագայթը վառելով՝ բորբոքում էր հյուսիսի պաղությունները, լուծարում ամբարշտության ձմեռը, հակառակ հողմերով հանդարտեցնում էր նաև մեղքերի փրփրատեսակ ալիքների լեռնացայտ կուտակները. իսկ օդը սառեցնողը, որը հոգով եռալն արգելում էր, որը մահաթույն վիշապն էր փչում, ավելի քան հյուսիսայինը գումարում էր անգիտության խավարը՝ մեգով հանդերձ: Իսկ քաղցրուսույց

Բանի հարավայինը ծավալելով Սուրբ Հոգու տեղացած անձրևի մեջ՝ ծաղկեցնում է աստվածագիտության բողբոջներով Հայաստանը՝ քաղցր պտղով վայելչացածներիս, որպեսզի դառնանք արդարության դրախտ խունկերի՝ հոգևոր տունկերի անուշահոտությունը բուրելու համար ի փառս Աստուծո: Եվ լրացնում է կուսական մաղթանքը, թե՝ «Թող իջնի իմ Եղբորորդին Իր պարտեզը և ուտի Իր ծառերի պտուղները» [Երգ, Ե 1]: Քանզի հոգևոր հարսանյաց խորհուրդը կատարման հասնելով և փրկության երկունքի ժամը հասնելով՝ Սուրբ Հոգին կույսի որդիների մեջ մի վայրկյանում ծնում էր ողջ Պարթևաց տերությունը. և իրականանում էր գիրը. «Երկնեց Սիոնը, և ծնվեց ողջ մի ազգ» [Եսայի, ԿԶ 8]. ինչպես հայտնում էին արքունի բյուր բանակները, որոնք, Հոգուց ծնվելով, մի ժամում Եփրատի մեջ որդեգրության ավետիսը ստացան՝ ի վերուստ շողալով լույսի ծագմամբ:

Նաև մոլեգնած բռնավորը, որ փափագում էր կույսին իրեն սեփականացնել, Քրիստոսի կողմից յուրացվեց. և, իր մեջ ախտերի բոցը հանգցնելով, ճշմարտության հրով վառված, կույսին որդի գրվեց և, Բանի քարոզը լինելով, հայրենի տերությունը լցնում էր Ավետարանի լույսով: Եվ ոչ միայն՝ այս, այլև՝ Աստվածության գանձերը՝ սրբի կուսական մարմնի ծաղիկները, որը սպանել էր, ժողովելով ամփոփում էր որպես գանձ իր համար, որպես հավիտենական մեծություն: Եվ իր զորության քաջության քրտինքը սուրբերի վկայարանում է թողնում հավիտենապես և իրեն բարության օրինակ հարդարում բոլորի համար, առաքելական հանդեսով լուսավորում արևելքը Երրորդության լույսով:

Նաև արևմուտքում էր շիջանում մոլորության բոցը վկաների արյամբ՝ Ավետարանի ճառագայթը լույսի հետ շրջափայլելով ամենուր: Քանզի Աստուծո այն ատելին և ցանկասերը և գարշելին՝ Դիոկղետիանոսը, որը, սուրբ Հռիփսիմեից իր կրած անարգանքների պատճառով չարացած, ոգորում էր տիեզերքում՝ լռեցնելու ճշմարտության կրոնը, հանկարծակի հանգչելով՝ մեջտեղից ջնջվեց-վերացավ՝ իր համախոհ օձի ծնունդներով հանդերձ: Նույն սուրբը կույսի տանից ծագեց փրկության եղջյուրը՝ ի Տեր հուսացյալ թագավորը, սուրբ և հաղթող Կոստանդիանոս կայսրը: Եվ, գործակից լինելով մեր Տրդատ արքային, առհասարակ ջնջեցին բազմաստվածության վրդովմունքները՝ խաղաղություն հաստատելով ողջ աշխարհում. և, Ավետարանի լույսն առաքելաբար իրենց մեջ ընդունելով, տիեզերասաստ զորությամբ երկնքի տակիններին նվաճեցին ի հնազանդություն վերին թագավորությանը: Եվ լրացավ գիրը, որ ասում է. «Խոստովանելու են Քեզ երկրի թագավորները» [Սաղմ., ՃԼԷ 4], և թե՝ «Երկրի՛ թագավորություններ, օրհնեցե՛ք Տիրոջը» [Սաղմ., ԿԷ 33]:

Այսպիսով կատարվեց բոլորիս ուղղված՝ սուրբ կույս Հռիփսիմեի բազմերանյան վայելչության ավետիքը, ինչպես որ հայտնի է բոլորին: Այսօր այս տոնի խորհուրդը մեզ հոգևոր օրհնությունների քաղցրաձայնությանը հորդորեց. ա՛յս է կուսական վկաների հանդեսը: Սրա՛նք են, որ, մեր աշխարհին որպես լուսավորներ փայլելով, Աստվածության հնչյուններով լցրին բոլորիս, որոնք մեր երկրում ծաղկած Աստվածության գանձերն են, լուսավոր աստղեր, Եկեղեցու ծաղիկներ, ճանապարհներ մեզ համար և կենաց դուռ դեպի երկինք, բանավոր ողջակեզներ, կատարյալ զենումներ, ընդունելի պատարագներ, ճշմարտության քարոզներ, ստության արձանացուցիչներ, մոլության լուծում, չարության հալածիչներ, աշխարհի մաքրության համար մեղքերի ջրհեղեղ, մարդկային ազգի

պարծանքներ, մեզ՝ հույս հանդերձյալ կյանքում՝ ի Քրիստոս Հիսուս: Սրանց նախանձավոր լինենք բոլորս՝ նմանապես սիրելու Քրիստոսին, որպեսզի ընդունենք ողորմությունը և շնորհներ գտնենք պետք եղած ժամանակ՝ սրանց օգնականությամբ:

Սրանք իմ խոսքերից քեզ պտուղ, ո՜վ երջանիկդ կանանց մեջ, հաղթո՛ղ նահատակ և սո՛ւրբ հարս, դո՛ւ՝ ոչ թե ղոմբիական մարտերի հաղթանակի ձիթենու պսակ և ոչ էլ՝ ոսկեկուռ ակներով փայլող թագ՝ զարդարելու արքայական հարսանիքը, այլ՝ մաքուր ընտանեգույն ընծա Բանը սիրողներին և իմաստության ծաղիկ ի Քրիստոս. արյամբ ոռոգված բուրաստան, որ, որպես զարդ քո հարսնությանը, համահավաքվել ես այն ծաղիկներով, որոնցով պսակվում ես. քրտինքի առաջին կաթիլներն իմ նորաբույս հոգու, որ սիրում է քեզ, իսկապես սիրեցյա՛լդ բարու, ընդունի՛ր գթությամբ որպես արդարև գորովագութ մայր, և դեպի ի՛նձ դարձրու Սիրողի՝ քեզ փեսայացած Բանի գթությունը, որպեսզի ես ցնծամ քեզ հետ, երբ Նրա լույսի փառքը երևա: Եվ մեզ բոլորիս, ում քո արյամբ ծնեցիր Բանին որդեգրելու համար, մշտահայց աղոթքներով Նրա՛ն հանձնիր, ծածկվա՛ծդ Նրա թևերի հովանու տակ: Որպեսզի Աւետարանի լույսով առաջնորդվածներս, այս հավիտյանի անգոների միջով անցնելով, հանդերձյալին ժամանենք՝ հասնելու Կյանքին՝ նույն Ինքն Հիսուս Քրիստոսին՝ մեր Տիրոջը: Որի հետ և Հորը, միանգամայն և Սուրբ Հոգուն վայել է փառք, իշխանություն և պատիվ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5

Սահակ Արծրունյաց իշխանի թուղթը երանելի վարդապետ Մովսես Խորենացուն 9

Սահակի թղթի պատասխանը 11

Վարդավառի խորհրդի մասին 27

Սուրբ Հռիփսիմյանների պատմությունը 41

Սուրբ Հռիփսիմեի և նրա վկայակիցների հիշատակին և նրանց նահատակությանը նվիրված ներբողյան՝ հրաշազարդ հորինվածներով 49

Խմբագիր՝ Ասողիկ եպիսկոպոս
Գեղ. խմբագիր՝ Ղևոնդ քահանա
Շապիկը՝ Ա. Օհանջանյանի
Սրբագրիչ՝ Յու. Հովհաննիսյան